№ 193 ԵՐԵՔՇԱԲԹԻ 3 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ

1913
ՔԱՌԱՍՈՒՆԵՐԿՈՒԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ԵՐԵՔՇԱԲԹԻ 3 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ № 193

Տարեկան գինը 10 ռուբլի. կէս տարվանը և 7 ամսվանը 6 ռուբլի.
Առանձին համարները ԱՄԵՆ ՏԵՂ 5 ԿՈՊ.
Թիֆլիսում գրվում են խմբագրատանը.
Մեր հասցէն՝ Тифлисъ, редакція «Мшакъ»
Сергіевская ул. № 5.
Tiflis, Rédaction „Mschak"
Խմբագրատան տելէֆօն № 2—53.

ՄՇԱԿ

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2
(բացի կիրակի և տօն օրերից)
Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզւով
Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր տողատեղին 10—20 կոպ.
Տպարանի տելէֆօն № 67.

ՄՇԱԿ

Հասցէն՝ ТИФЛИСЪ, Редакція „МШАКЪ".

TIFLIS, Rédaction du journal „MSCHAK".

ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 1-ԻՑ ՄԻՆՉԵՒ ՏԱՐՎԱՑ ՎԵՐՋԸ 4 ՌՈՒԲ.

Բաժանորդագրվել կարելի է իւրաքանչիւր ամսի 1-ից սկսած։

Հասցէն փոխելու համար պէտք է ուղարկել նաև հին հասցէն և 40 կ. Նամակադրոշմ. ՀԻՆ ՀԱՍՑԷՆ և 40 կ. չուղարկողների խնդիրները՝ հասցէն փոխելու վերաբերմամբ՝ ԿԸ ԹՈՂՆՎԵՆ ԱՆՀԵՏԵՒԱՆՔ։

Յայտարարութիւնների համար պէտք է վճարել I երեսի վրա իւրաքանչիւր տողատեղին (պետիտ) -20 կ., IV երեսի վրա—10 կոպ.։

Կովկասից դուրս գտնվող անձերի և հիմնարկութիւնների յայտարարութիւնները բացառապէս ընդունվում են՝ Մոսկվայում—Центральная Контора Объявленій Торг. Дома Л. и Э. Метцль и К°, և նրա բաժանմունքներում—Պետերբուրգում՝ Морская, 11, Վարշավայում՝ Маршальковская, 130, Վիլնօյում՝ Большая 32, Պարիզում՝ Площадь Биржи 8

1913 թւի տարեկան բաժանորդները, որոնք առ 1-ն յունվարի 1914 թ. լրիւ վճարած կլինեն բաժանորդավճար 10 ռուբլին, ձրիաբար կը ստանան հետևեալ 2 գրքերը. 1) «Մշակ» և հայ կինը», 2) «Մշակի» քառասնամեակ»։

ԱՊԱՌԻԿ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ ԿԱՄ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ ՉԷ ԸՆԴՈՒՆՎՈՒՄ

Առաջնակարգ մեծ ցիրկ ԵՂԲ. ԵՍԻԿՕՎՍԿԻՆԵՐԻ

Միքայէլեան փող., Մուշտայիդ այգու մուտքի մօտ, սեփ. ամ. շինութիւն։

ԱՅՍՕՐ, երեքշաբթի, սեպտեմբերի 3-ին տեղի կունենայ չը տեսնված ծաղրածուական ներկայացում մասնակցութեամբ բոլոր ծաղրածուների և առաջնակարգ արտիստների։ Ծիծաղի և զուարճութիւնների երեկոյթ։ ԱՅՍՕՐ մասնակցում են ծաղրածուներ, հանաքչիներ, էկսցենտրիկներ, հումօրիստներ, օրվայ չարիքների կալամբուրներ և այլն։ Օդաչուութեան ռէկօրդը տարված է։ Ժամանել է օդաչուութեան 5-րդ արքան, որը, «4 սատանաների» հետ միասին, թռիչք կը կատարէ՝ հանդերձ մի շարք նորագոյն դժուարին տրիւկներով։ ԱՅՍՕՐ մասնակցում են՝ հանաքչիներ և կոմիկներ, նոյնպէս և ուրախ տրամադրութիւն ստեղծող եզը. ՎԻՆՁԵՆՑՕՆԵՐԸ, ամեն տեսակ կենդանիներ մարզող հանճարեղ ՌՕԲԵՐՏԸ իր խօսող էշուկի և մաթեմատիկ շան հետ, ժողովրդական երաժիշտ-էկսցենտրիկներ ԲՐՕԿԱՐՍ՝ նորերս ժամանած ԱՒԳՈՒՍՏԻԿԻ հետ միասին, իտալական լարախաղացներ Դէլլա Կազօն, էկվիլիբրիստ Էլլան և Կարլին, Նիկօլինը և այլն։ Ներկայացման սկիզբը երեկոյեան ժամը 8½-ին։ 724. 1—1

ԴՊՐՈՑ-ՊԱՆՍԻՕՆ եւ ՄԱՆԿԱԿԱՆ ՊԱՐՏԷԶ
ՏԻԿ. ԵՐ. ՅԱՐՈՒԹԻՒՆԵԱՆԻ
БЕБУТОВСКАЯ УЛ. № 5.
(18-երորդ տարի)
Ընդունելութիւնը սկսվում է 25 [illegible]
Գիշերօթիկներ սահմանափակ թւով։
(24, 29 և 1,3) առ. 660 5—5

ԲԺ. Ա. ՇԻԽԵԱՆ
ՎԵՐԱԴԱՐՁԱՒ ԱՐՏԱՍԱՀՄԱՆԻՑ
և վերսկսեց հիւանդների ընդունելութիւնը իր ՆՈՐ բնակարանում՝
Գանօվսկայա փող. № 23,
տելէֆօն № 15—30.
առ. 725. 5—1

ԲԺԻՇԿ
ՇՈՒՇԱՆԻԿ ՆԱԲԱԹԵԱՆ
Ընդունում է հիւանդներ կանանց և մանկաբարձութեան վերաբերեալ ամեն օր, բացի կիրակի օրերից, երեկ. ժամը 5—6-ը։
Հասցէն՝ Ռուդչէվսկայա № 1.
առ. (Ե.Հ.Կ.) 4. 100—97

ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԸ

ԼՈՒՐԵՐ ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԻ ՄԱՍԻՆ

Էրզրումից մեզ հաղորդում են, որ այնտեղ յամառ կերպով լուր է շրջում, թէ Բաբերդի զօրանոցներից փախած զինւորները Կոփ-Դաղի վրա թալանել են Էրզրումի վալիի որդուն և հաքիմին, ինչպէս և սրանց ուղեկցող ժանդարմներին, որոնցից 15 հոգի սպանված կամ վիրաւորված են։

Թղթակիցն առհասարակ շատ մութ գոյներով է նկարագրում տեղական կեանքը։ Անապահովութիւնը Թիւրքահայաստանի այդ շրջանում գնալով աւելի է շեշտվում. առևտուրը կանգ է առել, որի շնորհիւ սնանկութեան դէպքերը յաճախակի են դարձել։ Քաղաքացիական և զինւորական պաշտօնէութիւնը, որ 6—7 ամսից ի վեր ռոճիկ չէր ստացել, վերջերս՝ Բայրամի տօնի առիթով հազիւ-հազ իր մի ամսականի կէսը կարողացել է ստանալ։

—

Գերմանական տեղեկութիւնների համաձայն, Թիւրքիան եռանդուն դիմադրութիւն է ցոյց տալու Հայաստանի համար նախագծված բարենորոգումներին։

—

Լուրերի համաձայն, Ռուսաստանը, Անգլիան և Ֆրանսիան բողոքելու են այն դէպքում, եթէ Գերմանիան պահանջէ վերստին իրան յանձնել Սիրիայում և Հայաստանում երկաթուղիներ կառուցանելու կոնցեսիան։

—

Հայկական հարցի առիթով, որ համարեա, ինչպէս ասում են, ջուրն ընկնելու է դատապարտված, արտասահմանեան մամուլի օրգաններից շատերը շարունակ յօդուածներ են տպում։ Պակաս ուշադրութիւն ցոյց չէ տալիս դէպի հայկական հարցը և ռուսական ազդեցիկ մամուլը։

Կ. Պոլսի «Սաբահ» օրաթերթը յայտնում է, որ Անատոլիայի վիլայէթներում բարենորոգումներ մտցնելու գործում Թիւրքաց կենտրոնական կառավարութիւնը վերջնականապէս կանգ է առել ապակենտրոնացման սիստեմի վրա, վերին աստիճանի անհրաժեշտ գտնելով օտարազգի ձեռնհաս անձանց հրաւիրել այդ բարենորոգումների իրականացման համար։

—

«Рѣчь»-ում տպված է մի «յայտնի» ռուս դիւանագէտի կարծիքը Անատոլիայում երկաթուղիների կոնցեսիա ձեռք բերելու մասին։ Այդ դիւանագէտի կարծիքով՝ Ռուսաստանը Ասիական Թիւրքիայում տնտեսական շահերից դրդված մրցելու է անգլիական երկաթուղիների դէմ։ Թիւրքիան դեռ 15 տարի առաջ յատուկ պայմանագրով պարտաւորվել է առաջնակարգ արտօնութիւն տալ Ռուսաստանին Փոքր-Ասիայում երկաթուղիներ կառուցանելու գործում։ Այդ «յայտնի» դիւանագէտը վերջում աւելացրել է, որ «մենք Ասիական Թիւրքիայի մի մասը զիջեցինք ֆրանսիացիներին»։

ԽԱԲՐԻԿՆԵՐ ԲԱՐՁՐ ՀԱՅՔԻՑ

Թւանշանների լեզուն

Ինչպէ՞ս անցաւ կեանքը Թիւրքահայաստանում 6 ամսվայ ընթացքում։

Էրզրում, 23 օգոստոսի

Թիւրքահայաստանի թղթակիցը իր բոլոր թղթակցութիւնների մէջ անհրաժեշտօրէն ստիպված է արձանագրել օրվայ դէպքերը։ Այս երկրային դժոխքում «դէպք» ասելով պէտք է հասկանալ՝ սպանութիւն, թալան, բռնաբարում, զինված յարձակումներ ու կռիւներ։ Քաղաքակիրթ ու խաղաղ երկիրներում «դէպք» բառը հասկացվում է շատ մեղմ մտքով. այնտեղ դէպքեր են՝ ձեռքի փոքրիկ կռիւները, կառքի, աւտօմօբիլի արկածները, սկանդալները և այլն։ Եթէ գործվի սպանութիւն, գողութիւն, օ՜հ, բառաբանը բաց են անում և ածականներ որոնում, էլ «ոճիր», էլ «քստմնելի խժդժութիւն», «սարսափելի դրամա», «տրագեդիա» և դեռ ինչե՜ր... Իսկ այդ բոլորը մեզ մօտ «դէպքեր» են, «սովորական, առօրեայ դէպքեր»։ Նրանք մեր սրտերը սաստիկ յուզելու ոյժ ու ազդեցութիւն չունեն։

Զգալու, դիտելու, արտայայտվելու մասշտաբները որքան տարբեր են մեզ մօտ՝ Թիւրքահայաստանում...

Դժոխք է։ Բայց էլի ապրում ենք։

Ես ցանկանում եմ տալ քիչ թէ շատ մի ընդհանուր պատկեր՝ Թիւրքահայաստանում վերջին 6 ամսվայ ընթացքում անց կացված կեանքի մասին։

1913 թ. յունվարի 1-ից մինչև յունիսի 30-ը, այսինքն 6 ամսվայ ընթացքում հայկական 6 նահանգների շրջաններում կատարվել են 106 հայերի սպանութիւններ, գլխաւորապէս քիւրդ բէկերի ձեռքով ու մասամբ միայն թիւրքերի ու չէրքէզների կողմից։

Զէնքով վիրաւորվել են 88 հայեր, էլի քիւրդերի ու թիւրքերի ձեռքով։

Քիւրդական հօրդաները գիւղական շրջաններում ու մասամբ թիւրքեր (մի քանի դէպքեր ժանդարմների կողմից) քաղաքներում հայերի վրա գործ են դրել 119 զինված յարձակումներ։

Կոտորածի սարսափի, մասսայական խուճապի, ահաբեկումների 179 դէպքեր կան արձանագրված։

Կատարվել են էլի հայերի վրա 186 թալաններ, մեծ մասամբ քիւրդերի կողմից։

Պատկերը կատարեալ կը դառնայ, եթէ ի նկատի առնենք, որ այս վեց ամսվայ ընթացքում տեղի են ունեցել 59 հայ աղջիկների առևանգումներ ու բռնաբարումներ (8 մանչ)։ Դրանցից մի մասը իսլամական կրօնն է ընդունել բռնի կամ կամովին, [illegible] առևանգիչների տրամադրութեան տակ, և ոմանք էլ լլկված ու անպատւված վերադարձվել են իրենց ծնողներին։

Ամենից շատ Բիթլիս-Մուշ նահանգն է, որ տալիս է դէպքերի մեծ տոկոս (52 սպանութիւն, 88 թալան, 25 բռնաբարում, 57 կոտորածի սարսափ, մասսայական խուճապներ և այլն)։

Բիթլիս-Մուշ նահանգից վերջ աչքի են ընկնում Վանի և ապա Դիարբեքիրի նահանգները։

Եթէ ամբողջ Թիւրքիայում քիւրդերի ու թիւրքերի կողմից հայերի վրա գործ դրված սպանութիւնների, թալանների, բռնաբարումների պատկերը (6 ամսվայ) ուզենանք կազմել, կը ստացվեն հետևեալ թւերը. 140 սպանվածներ, 113 վիրաւորներ, 134 զինված յարձակումներ, 229 կոտորածի սարսափ, ահաբեկում և այլն, 196 թալաններ, 77 բռնաբարում-առևանգում (մանչ և աղջիկ)։ Գումար «սովորական դէպքերի» 889.

Երևակայեցէք, որ այս թւերը վերաբերում են միմիայն հայերին. սրանում չը կան քիւրդ ու թիւրք խաղաղ ժողովրդի կրած տանջանքները։

Ես հնարաւորութիւն ունեցայ միայն հայերինը ստուգել ու նրանց ցուցակը կազմել, որովհետև հայերի վրա գործ դրված բռնութիւնները առ հասարակ արձագանք են գտնում հայ ընթացիկ մամուլի էջերում։ Մինչդեռ թիւրք մամուլը չէ հետաքրքրվում ոչ հայերի և ոչ էլ խաղաղ թիւրք ու քիւրդ ժողովրդի կեանքով. նա ամբողջովին կլանված է շաբլօնական խնդիրներով, արտաքին-քաղաքական ու զուտ պետական-պաշտօնական հարցերով։

Հայերի կրած զրկանքների, սպանութիւնների ու խժդժութիւնների արձանագրողներն են հայ հոգևոր կառավարութիւնը, սկսած գիւղական գործակալ-քահանայից, քաղաքների առաջնորդարանից մինչև մայրաքաղաքի պատրիարքարանը. բացի դրանցից, կարևոր դեր են խաղում Դաշնակցութիւն կուսակցութեան օրգանները իրենց բազմաթիւ ընկեր-թղթակիցներով։

Այն թւերը, որ ես ներկայացրի, ապահովաբար չեն լրացնի կեանքի իսկական պատկերը, որովհետև շատ տեղեր, մութ, կորած անկիւններում կատարված դէպքերը, սպանութիւնները մնում են անյայտ ու անյիշատակելի, նոյն իսկ կառավարութիւնն էլ լուր չի ունենայ։

Ես ցանկացայ իմ կազմած ցուցակները բաղդատել կառավարական արձանագրութիւնների հետ (միայն Էրզրումի նահանգը). երբ իմ այդ մտադրութիւնը յայտնեցի թիւրք պաշտօնեայ Մ. էֆէնդիին և խնդրեցի նրա աջակցութիւնը, նա վրդովվեց ու խորհուրդ տուեց ինձ «ջուր չը պղտորել» և ապա աւելացրեց խօսուածքի համոզված տոնով.

— Երկիրը կատարելապէս խաղաղ է, իսկ կատարված մի քանի դէպքերը անարժէք բաներ են, ուղղամիտ մարդը չի ցանկանայ դրանցից ընդհանուր հետևութիւններ դուրս բերել ու ձուի մէջ մազ փնտռել. և արդէն թիւրք-հայ ազգերի եղբայրութիւնն ու միութիւնը կատարելապէս կատարեալ է։

Թիւրքերի և քիւրդերի կողմից հայերի վրա գործ դրված 889 սպանութեան, թալանի, յարձակման, կոտորածի, ահաբեկման դէպքերի հանդէպ՝ գտնում ենք հազիւ հազ 7—8 թիւրքերի ու քիւրդերի սպանութեան դէպքեր հայերի կողմից, գրեթէ առանց բացառութեան ինքնապաշտպանութեան կամ փոխ-վրէժի հողի վրա։

Թալան, բռնաբարում և այլն հայերը երբեք չեն գործադրել իրենց հարևան ազգերի վրա։

Հայերի կրած 889 սպանութեան, ոճիրների, թալանի, յարձակման և այլ դէպքերում ոճրագործ-հեղինակներից մօտ 65%-ը բոլորովին մնացել են ազատ, 23%-ը ձևականութեան համար ձերբակալվել է ու ապա «առ ի չգոյէ ապացոյցի» ազատ արձակվել. Մնացեալ շատ չնչին մասը միայն կրել է պատիժ։

Ցանցառ նկատված հայերը մեծ մասամբ ձերբակալվել են ու ըստ օրէնի պատժվել։

Ահա թէ ինչ է նշանակում այլ և ֆորմուլա դարձած այն խօսքը, թէ «Թիւրքիայում հայերը նկատված են օրէնքից դուրս»։

Այդպէս են ասում փաստերը, հատիկ-հատիկ ստուգված և խնամքով արձանագրված թւանշանները։

Պերճախօս է նրանց լեզուն։

Ես հաշւի չեմ առել տակաւին թիւրքերի, քիւրդերի ու կառավարութեան կողմից հայերի վրա գործ դրված հրկիզումները, գողութիւնները, ծեծերը, բռնի հաւաքված բէկական տուրքերը, սպառնալիքի տակ կատարված ձրի աշխատանքները, հողային բռնագրաւումները, խոշտանգումները, ապօրինի խուզարկութիւնները, անմեղ ձերբակալութիւններն ու բանտարկութիւնները, զինւորացու և պետական տուրք հաւաքելու առիթով ժանդարմների գործ դրած բռնութիւնները և լկտիութիւնները, կաշառակերութիւնները և վերջապէս օրէնքի անունով կատարված զրկանքները։

Այդ բոլորի հատիկ-հատիկ արձանագրութիւնը երևի մի քանի հազարի կը հասնի, միայն վեց ամսվայ ընթացքում։

Այսպիսի կացութեան մէջ, կարծում եմ, այնքան էլ արդար չէ ոմանց այն մեղադրանքը, թէ Թիւրքահայաստանի թղթակիցները սանտիմենտալ մարդիկ են, թէ զահլա են տանում իրենց սպանութեան, թալանի և այլն լուրերով։ Երբ փոխվի իրականութիւնը, այն ժամանակ միայն մենք էլ ուրիշ բանի մասին կը սկսենք գրել։

Քուրմ

ՎԵՐՋԻՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

(Պետերբուրգի Հեռ. Գործ.)

31 օգոստ., 1 սեպտ.

Պետերբուրգ.—Պաշտօնական։ Անուանական Բարձրագոյն հրաման կառավարիչ սենատին.

«Փորձնական զօրահաւաք կատարելու Մենք անհրաժեշտ գտանք ռազմի վիճակում դնել Պսկօվի նահանգի Նովօրժևի, Օպօչէցկի, Օստրովսկի և Պորխովսկի գաւառները. Պսկօվի գաւառում բացի դրանից ազգաբնակութիւնը տալու է ձիեր Վիտէբսկի նահ. Լիւցինի, Նեվէլի և Սեբէժի գաւառներից. իսկական զինւորական ծառայութեան կոչել պահեստի զինւորներին համաձայն այն ցուցումների, որ Մենք իրաւունք ենք տուել տալ սրա վերաբերմամբ զինւորական մինիստրին:

«Կառավարիչ սենատը չի յապաղի այս առիթով պատշաճ կարգադրութիւնը անելու»:

Իսկականի վրա Ն. Կ. Մ. սեփական ձեռքով ստորագրված է՝ «ՆԻԿՈԼԱՅ»։

Պետերհօֆ, 27 յուլիսի, 1913 թիւ։

Ճշդեց զինւորական մինիստր գեն. ադիւտ. Սուխոմլինով։

Պաշտօնական։ Կայսերական պալատի մինիստրի հեռագիրը. «Օգոստ. 31-ին Թագաւոր Կայսրը Օգոստափառ Դուստրերի հետ, շքախմբի անձերի ուղեկցութեամբ ժամանեց Բախչիսարայ և մտաւ խանի նախկին պալատը, ուր դիմաւորվեց Տաւրիկեան նահանգապետ Լաւրինովսկիից. Բախչիսարայի քաղաքագլուխ Կրիմտաևը բաղդ ունեցաւ մատուցել Նորին Մեծութեանը աղ ու հաց։ Դիտելով պալատի շինութիւնը Նորին Մեծութիւնը և Նոցին Բարձրութիւնները զբօսանք կատարեցին Բախչիսարայի շրջակայքում։ Թագաւոր Կայսրը ամենուրեք ցնծագին ողջունվեց ազգաբնակութիւնից։ Ապա Նորին Մեծութիւնը Օգոստափառ Դուստրերի հետ բարեհաճեց վերադառնալ Լիվադիա»։

—

Կիէվ.—Հանդիսաւորութեամբ բացվեց առաջին համառուսական գիւղատնտեսական համագումարը։ Պատգամաւորների թիւը մօտ 1000 է։ Կազմակերպիչ բիւրօյի նախագահ Դուբրօվը, բանալով համագումարը, աջողութիւն ցանկացաւ աշխատանքներին և առաջարկեց արտայայտել ամենահպատակ զգացմունքներ Ռուսական Երկրի Ինքնակալ Տիրոջ։ Համագումարը միաձայն յանձնարարեց պրեզիդիումին ուղարկել ամենահպատակ հեռագիր։ Նախագահող ընտրվեց Կիէվի նահանգական վարչութեան նախագահ Սուկօվկինը, որ իր ողջոյնի ճառի մէջ ընդգծեց, թէ համագումարին եկած ներկայացուցիչների քանակն ու որակը ինքնին նրա աշխատանքների գրաւական է ծառայում։ Կարդացվեցին ողջոյնի հեռագիրներ, որոնց թւում մինիստրների խորհրդի նախագահի կողմից։ Երկրագործութեան դեպարտամենտի փոխ-դիւանապետը, ողջունելով համագումարը երկրագործութեան դեպարտամենտի կողմից հինաւուրց Կիէվում—ռուսական կուլտուրայի օրրանում—շեշտեց, որ դեպարտամենտի ու նպատակայարմար, երբ կընթանայ գիւղատնտեսական ընկերութիւնների, զեմստվօների և ուրիշ հասարակական հաստատութիւնների գործունէութեան հետ զուգընթաց։ Ներկայումս Ռուսաստանը գտնվում է գիւղատնտեսական անսովոր զարգացման շրջանում։

Բարձրագոյն կրթական հաստատութիւնների և ընկերութիւնների ներկայացուցիչների կողմից ողջունեց Մոսկվայի գիւղատնտեսական ընկերութեան պատգամաւորը, որ յոյս յայտնեց, թէ հետևեալ համագումարը 1915 թ. կը կայանայ Մոսկվայում։ Պրոֆ. Գէցօվը ողջունեց համագումարը Գալիցիայի 5 միլիօն ազգաբնակութեան կողմից և ցանկացաւ շահաւէտ աշխատանք ի փառս անբաժան Ռուսաստանի։

—

Սիմբիրսկ. — Ստոլիպինի արձանի բացման առիթով ստացված են շնորհաւորական հեռագիրներ մինիստրների խորհրդի նախագահի, բոլոր մինիստրների և սրանց օգնականների, սինօդի օբէր-պրօկուրօրի և ուրիշ բարձրաստիճան անձերի կողմից։

—

Պօրտլանդ.—Եկան դարձեալ անգլիական երկու զրահանաւ, որոնք մտնում են երրորդ նաւատորմի կազմի մէջ։ Այդպիսով ռուսաց նաւատորմն ընդունելու համար ընդամենը սպասում են 5 զրահանաւ և 20 հակաականանաւ։ Առ այժմ ռուսաց նաւատորմի մասին տեղեկութիւններ չը կան։

—

Պօրտլանդ.—Պայծառ օր է։ Ժամը 3-ի մօտերը երևաց ռուսական նաւատորմի ծուխը։ Ժամը 3 ու 30 րոպէին նաւատորմը կանգ առաւ։ «Ռիւրիկը» և ծովափի մարտկոցը փոխադարձաբար կրակեցին 21-ական թնդանօթ։ Ապա անգլիական «Դրէդնօուտ» նաւը «Ռիւրիկի» հետ փոխանակեց 18 թնդանօթաձգութիւն։ Կէսօրվայ ժամը 4-ին նաւատորմը սկսեց նաւահանգիստ մտնել։ Ռուս և անգլիացի նաւաստիները կանգնած էին ծովափերին։ Երաժշտախումբը նուագեց ռուսական և անգլիական ազգային օրհներգը։ Ժամը 5-ին նաւատորմը խարիսխ ձգեց։ Փոխ-ծովակալ Բրիգգս եկաւ «Ռիւրիկ» ողջունելու պաշտօնով աւագ ծովակալ Հէսսէնին։ Վերջինս փոխ-այցելութիւն տուեց Բրիգգսին «Դրէդնօուտի» վրա։ Ծովակալների հեռանալուց յետոյ երկուստեք նաւերը կրակեցին սահմանված թւով թնդանօթներից։ Ծովափերը լի են ազգաբնակութեամբ։

—

Լօնդօն.—Նորդումբէրլէնդում հրդեհը ոչնչացրեց Կէնտօն կայարանը։ Բագաժի ընկալագրերի վրա մակագրված էր, «Թշնամական գործողութիւնների համար պատասխանատու հանդիսանում է Ասկվիտը. դիմեցէք նրան՝ վնասները հատուցանելու պահանջով»։

—

Տօկիօ.—Անցեալ տարվայ պետական շրջանառութիւնից մնաց յաւելեալ գումար 57 միլիօն իէն։ Այս տարի կը մնայ 96 միլիօն։ Ի թիւս այլոց 30 միլիօն ծախսվելու է նաւակառուցման ծրագրի գործադրութեան վրա։

—

Կ. Պօլսից մեզ հաղորդում են օգոստոսի 24-ից, որ Հայ Սահմանադիր Ռամկ. Կուսակցութեան լիդէրներից մէկը, բանաստեղծ Վահան Թէքէեանը, նշանակվել է տեսուչ Կեսարիայի ս. Կարապետի վանքի բարձրագոյն դպրոցի և մի երկու օրից մեկնելու էր իր նոր պաշտօնատեղին։

Թէքէեանի մեկնումով՝ յիշեալ կուսակցութեան Կ. Պօլսի ակումբը կրում է մի ծանր հարուած, որովհետև Թէքէեանը այդ ակումբի ամենից գործօն ու կարկառուն դէմքերից մէկն էր։

ԲԱԼԿԱՆԵԱՆ ԳՈՐԾԵՐ

(Պետերբուրգի Հեռ. Գործ.)

31 օգոստ., 1 սեպտ.

Կ. Պօլիս.—Կայացաւ թիւրք-բուլղար պատգամաւորների նիստը։ Քննվեցին երկուստեք առաջարկված նախագծերը։ Սահմանի հարցի նկատմամբ պարզվեց, որ մօտ է հարցի լուծումը, որ կը բաւարարէ երկու կողմերին հաւասարապէս։ Օսմանեան պատգամաւորները ներկայացրին ազգութեան և պատերազմական գերիներին փոխադարձաբար յանձնելու հարցի նախագծերը։ Հետևեալ նիստը տեղի կունենայ երկուշաբթի։ Կարելի է յուսալ, որ մինչև չորեքշաբթի վեհաժողովի աշխատանքները կաւարտվեն։

Մեծ վէզիրն ընդունեց Գիւմիւլջինի ժամանակաւոր կառավարութեան պատգամաւորութեան և յայտնեց, որ կաբինէտը անկարող է հանդէս գալ պաշտօնապէս, սակայն ամեն տեսակ աջակցութիւն ցոյց կը տայ մահմեդականների շահերի պաշտպանութեան համար։

[illegible] թիւնը հաղորդում է, որ Կարնէջիի մասնաժողովի անդամները աշխատանքի են ձեռնարկել։ Բօլգարական կառավարութիւնը ամեն միջոց ձեռք է առել, որպէսզի ապահովէ մասնաժողովի խնդիրը և հնարաւորութիւն տայ նրան՝ քննութիւն կատարել միանգամայն ազատօրէն ու անկողմնապահութեամբ։

Մասնաժողովի անդամներից Բրէյլօֆօրդը և Գօրաբը խորհրդակցեցին արտաքին գործերի մինիստրի հետ աշխատանքի ծրագրի առիթով։ Նրանք մի երկու օր կը մնան Սօֆիայում փախստականների հարցին վերաբերեալ փաստաթղթերի հետ ծանօթանալու համար, ապա մտադիր են մեկնել Հիւսիսային Մակեդօնիա։ Ամբողջ մամուլը ողջունում է մասնաժողովի գալուստը։

Ֆէրդինանդ թագաւորը հրաման ստորագրեց գեներալ Ռադկօ Դմիտրիէվին Պետերբուրգում բօլգարական դեսպան նշանակելու մասին։

—

Բէլգրադ.—Սերբ-բօլգարական սահմանաբաժան յանձնաժողովի աշխատանքները ընթանում են աջող։ Մասնաժողովը յոյս ունի իր զբաղմունքներն աւարտել այս օրերս։

Սերբիայի և Բօլգարիայի միջև գերիների փոխանակումը տեղի կունենայ սեպտ. 2-ին։

Սերբիայի և Յունաստանի սահմանի հարցը քննվում է դիւանագիտական ճանապարհով։

ՉԻՆ-ՃԱՊՕՆԱԿԱՆ ՄԻՋԱԴԷՊԸ

(Պետերբուրգի Հեռ. Գործ.)

31 օգոստ., 1 սեպտ.

Տօկիօ.—«Նիբօկէն» հաղորդում է, որ Անգլիան համաձայնել է, որպէսզի Ճապօնիան ձեռք առնէ Չինաստանում այնպիսի միջոցներ, որոնք չեն խախտի չինական հանրապետութեան անձեռնմխելիութեան սկզբունքը։

Չինաստանից մեկնել է «Կասագի» յածանաւը։

—

Լօնդօն.—«Դէյլի Տէլէգրաֆին» հաղորդում են Տօկիօյից, որ լուրերի համաձայն Ճապօնիայի պահանջներից մէկն էլ այն է, որպէսզի Չինաստանը երկարէ Պօրտ-Արտուրի կապալի ժամանակը 50 տարով։

—

Վիէննա.—Նանկինում ուժեղ զօրամաս ափ իջեցնելու տեղեկութիւնը սխալ է. այնտեղ ճապօնական հպատակներին պաշտպանելու համար գտնվում են ընդամենը 107 մարդ։ Ճապօնիայի վերաբերմունքը դէպի Չինաստանը միանգամայն կօրրէկտ է։

—

Պէկին.—Չինական կառավարութիւնը ընդունեց օգ. 29-ին Ճապօնիայի կողմից առաջադրված պահանջները, որոնք կապ ունեն Նանկինում տեղի ունեցած չորս միջադէպերի հետ։

—

Պէկին.—Նանկինի դէպքերի առիթով արտաքին գործերի մինիստրը պատասխան-նօտայով տեղեկացրեց ճապօնական միսսիային, որ չինական կառավարութիւնը համաձայն է կատարելու ճապօնական բոլոր պահանջները և առանձին նօտա յղելու ճապօնական կառավարութեան խնդրելով ներողութիւն։ Գեներալ Չժունսինը ներողութիւն կը խնդրէ Նանկինի հիւպատոսից, զօրքերը շարքով կը կանգնեն հիւպատոսարանի առաջ և կը խնդրեն ներողութիւն, չինական կառավարութիւնը կը վարձատրէ սպանվածների ընտանիքներին, կը պատժէ մարդասպաններին և սպանութիւնը թոյլ տուող օֆիցէրներին։

ԳՈՐԾԱԴՈՒԼ

(Պետերբուրգի Հեռ. Գործ.)

31 օգոստոսի

ՄԱԴՐԻԴ։ Գործադուլ արեց Րիօդինտօ հանքային շրջանի երկաթուղային ծառայողների մի մասը։ Երթեւեկութիւնը դադարել է։

—

ՌԻԳԱ։ Այստեղ գործադուլային շարժումը վերջանում է։ Երեք գործարանում բանւորներն աշխատանքները վերսկսեցին նախկին պայմաններով։ Աշխատանքի կպան նաւահանգստային 1500 բանւոր, ստանալով 20% յաւելումն։

—

ԼՕՆԴՕՆ։ Գործաթող ներկարարները որոշեցին ընդունել տէրերի պայմանները։ 7000 բանւոր աշխատանքները կը վերսկսեն երկուշաբթի օրից։

ԽՕԼԵՐԱ

(Պետերբուրգի Հեռ. Գործ.)

31 օգոստոսի

ՍՈՒԿՈՎՕ։ Վախճանվեց խօլերայից վերջին կռիւների յայտնի հերոս Գրինի զօրաբանակի հրամանատար Նեգինը։

—

խօլերայի դէպքը եզակի է, բերված դըրսից, ուստի և հիմք չը կայ խուսափել Մարիէնբադից։

—

ՀՌՈՄ։ Ծովային վարչութեան սանիտարական մասի կարգադրութեամբ՝ Սև ծովի բոլոր նաւահանգիստներից եկող նաւերը ենթարկվում են հակախօլերային միջոցներին, ինչպիսիները գործադրվում էին 1907 թւին։

—

ՍՕՖԻԱ։ Ռումինական զօրքերով գրաւված տեղերում խօլերան աստիճանաբար թուլանում է։ Նոր հիւանդութիւններ պատահում են հազ-հազ։

1 սեպտեմբերի

ՕԴԵՍՍԱ։ Խերսօնից եկած բանւորը երեւաց խօլերայով հիւանդ։ Օդեսսայի գաւառում հիւանդացել են 2 մարդ։

ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻ ՇՈՒՐՋԸ

(Պետ. Հեռագ. Գործ.)

31 օգոստոսի

Թաւրիզ.—Նկատելի է, որ քանի մօտենում է Ջուլֆա-Թաւրիզ երկաթուղագծի կառուցման նախնական աշխատանքների աւարտման ժամանակը, այնքան մեծ թւով ռուս առևտրականներ են գալիս տեղս։

Հոկտեմբերի 8-ին Պարսկաստանը պակասեցնում է պօստային նամականիշների արժէքը։

Թէհրանից սկսել են գալ յեղափոխական կուսակցութիւններից ուղարկված անձինք՝ յօգուտ մէջլիսի ընտրութիւնների ագիտացիա մղելու համար։ Ագիտացիան տակաւին աջողութիւն չունի։

Եկել են շատ փախստականներ Խալխալից, ուր շարունակ վէճ ու կռիւ է տեղական խաների միջև։

ՆԱՄԱԿ ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻՑ

Թաւրիզ, 21 օգոստոսի

Տխուր է մեր գաւառի կրթական և հասարակական հարցերի վիճակն ընդհանրապէս համեմատած Թաւրիզի հետ։ Ուրմիայի գաւառը կարիք ունի դպրոցների. անգամ Ուրմիա քաղաքը, ուր կան բարեկեցիկ հայեր, զուրկ է ուսումնարանից և այս տարվանից աշխատանք կայ դպրոց բաց անելու՝ հայ երեխաներին ազատելով օտարադաւանների ճանկերից։ Սալմաստում, Խոյում դըպրոցական գործը պէտք ունի հսկողութեան և աւելի մի ուժեղ ձեռքի, որ մղում տայ կրթութեան ու կուլտուրային, երբ մանաւանդ պաշարված է գաւառը օտարադաւանների ցանցով։

Թեմակալ Ներսէս վ. Մելիք-Թանգեանը օգոստոսի 4-ին, ընկերակցութեամբ կենտրոնական ուսումնարանի ուսուցիչ և ազգագրագէտ Սենեքերիմ Տէր-Յակոբեանի, մեկնեց Ջուլֆայի վրայով Ստեփաննոս Նախավկայի վանքը, այնտեղից Մակու, Խոյ և Սալմաստ։ Թեմակալը շատ բան ունի անելու մանաւանդ Սալմաստում, ուր սկսված կրթական գործը մեծ օժանդակութեան է կարօտ և որտեղում մի կենտրոնական դըպրոց ունենալու շանս և տրամադրութիւն պակաս չեն։

Գաւառի հայ ազգաբնակութիւնը ծարաւի է կազդուրիչ քարոզի, ոգևորիչ խօսքի։ Այդ վայրերում անտէրութեան երեսից պակաս չեն դաւանափոխութիւն, կալուածատէրերի կեղեքումներ, կրթական և հասարակական գործերի անմխիթար վիճակ։ Դրանք բոլորը պահանջում են ուժեղ պաշտպանութիւն։

Թաւրիզէ նորընտիր թեմական խորհուրդը զբաղված է դատական գործերով։ Մարտիրոսապատի հարցը կորած պէտք է համարել, եթէ օգնութեան չը հասնի մի զօրեղ ձեռք։ Մարտիրոսապատ կալուածքը այսօրվայ արժէքով համարվում է Թաւրիզի հայերի համար 20,000 ր. մի կորուստ։ Երկրորդ դատական գործն է քէյվանցի հայերի դատը յայտնի աւազակապետ Ռաշիդուդ-Դօվլէ Բեարիմ-խանի հետ, որը դեռ եւս վախճան չը ստացաւ։ Երրորդ դատն է Մուժամբարի մօտիկ Սէօհրիւլ երբեմնի հայաբնակ գիւղի գիւղացիների պահանջը գիւղատիրոջից, որ անիրաւութեամբ դուրս է արել գիւղացիներին, տիրել նրանց տներին ու այգիներին և մինչև անգամ եկեղեցուն։ Առաջնորդարանը եկեղեցու արժէքը պահանջում է 10,000 թուման և գրեթէ նոյնչափ մի գումար գիւղացիների վնասները։ Գիւղի գնված արժէքն է 16,000 թուման։ Կամ այն է, որ գիւղատէրը առաջնորդարանի պահանջածը տայ, կամ գիւղը իր առած գնով ծախէ գիւղացիներին։ Հարցն այս կէտի մէջ էր, որ յանձնվեց շէրիի դատարանին ինչ-ինչ կէտեր վերջացնելու համար։ Թէ ի՛նչ կերպարանք է ստանալու այս դատը, արդեօք գիւղատէրը յանձնառու կը լինի գիւղը ծախել գիւղացիներին 16,000 թումանի և ազատել իրան ու գիւղացիներին, յայտնի չէ տակաւին։

Այս և ուրիշ հարցերի մասին կը տեղեկագրեմ «Մշակին» պարբերաբար։

«Մշակի» № 177-ում տպված իմ թղթակցութեան մէջ ակամայ մի սխալ է սպրդել, որ պարտք եմ համարում ուղղել։

Մարտիրոսապատ կալուածքի մասին Ֆարման-Ֆարմա Մելիք Ղասում միրզայի տուած [illegible] յիշեալ կալուածքը հայոց սեփականութիւնը լինելու վերաբերութեամբ, որ գրել էի թէ կորել է առաջնորդարանից, սխալ է, չէ կորել, այլ այդ ուժեղ դօկումենտը առձեռն գտնվելով հանդերձ, զոհ գնաց թանգագին կալուածքը։

Հայկազուն

Ց. Գ.—Երկու օր է՝ տարաձայնութիւն կայ քաղաքում, որ Մակուի ճանապարհում զինված աւազակներ յարձակվել են Թեմակալի վրա, կողոպտել, վիրաւորել և այլն։

Այսօր առաջնորդարանում ստացվեց Թեմակալի գրութիւնն այդ առիթով։ Վարմազեարում (գաւառակ Մակուի շրջանում) Թէփէսի-Դէլիք անուն գիւղից ընկերներով Մակուի Թադէոս առաքեալի վանքը գնալիս ետևից 3 զինված քիւրդ աւազակներ համազարկեր են տալիս, մինչև 30 գնդակ են արձակել. Թեմակալն իւրայիններով կարողացել է փախչել, միայն ծառան փափուկ մսից ստացել է անվնաս վէրք։ Մակուի սարդարը հետամտել է տալիս աւազակներին։ Եթէ հ. Թեմակալը նախօրօք իր գնացքը յայտնած լինէր սարդարին, նման դէպք տեղի չէր ունենայ։

Նոյն

ՆՈՐՈՒԹԻՒՆՆԵՐ ՏԱՐՕՆԷՆ

Մուշ, 11 օգոստոս

Կ. Պօլսոյ ազգ. պատրիարքարանը այս վերջերս կը հաղորդէր տեղւոյս առաջնորդարանին Եգիպտ. Հայ. Բ. Ընդհ. Միութեան մէկ կարգադրութիւնը, թէ Միութիւնը այլևս չի կրնար օգնել ս. Կարապետի ժառանգաւորաց վարժարանին, քանի այդ վանքը կը գտնուի վարչական և տնտեսական անբարեկարգ վիճակի մէջ։ Պատրիարքարանի մէկ տարբեր գրութիւնը կը հաղորդէ, որ Սանասարեանի խնամակալութիւնն այս տարի ևս կը խոստանայ 75 լիրա նպաստ տալ ս. Կարապետի ժառանգաւորաց վարժարանին։

Միացեալ Ընկերութեան ընդհանուր տեսուչ Ց. Գույումճեան եկաւ հոս և գնաց։ Անոր դիմումները այս անգամ մշեցիներուն՝ բարեյաջող վերջաւորութիւն մը ունեցան։ Մշեցիք խոստացան Միացեալին իբր տարեկան նպաստ տալ 75 լիրա, պայմանաւ որ Միացեալն ալ աշխատի առաջիկայ տարիներու մէջ բարձրացնել Մուշի Ներսիսեան վարժարանի բիւջէն և կրթական մակարդակը։ Գույումճեան այս տարուան համար չկրցաւ բիւջէի փոփոխութիւն մը խոստանալ, նկատելով որ Միացեալն ի վիճակի չէ աւելի նոր բան մը ընել Մուշի այդ պատմական վարժարանին։

Ցաւալի է ըսել, որ այս տարի աւելի սև ու մռայլ ամպեր կը գլգուին Մուշի Մխիթարեան երեք վարժարանաց հորիզոնին վրայ։ Նախորդներովս գրած էի, որ Մխիթարեանները Մուշ քաղաքի և շրջակայ 2 հայ-կաթոլիկ գիւղերու մէջ կը պահեն 250 լիրա բիւջէով երեք վարժարան։ Գլխաւորը Մուշի կեդրոնի մէջն է, ուր կը պահեն 7–8 պաշտօնեայով 150—180 աշակերտներ։ Տարիէ մը ի վեր է, սակայն, սկսեր են սև ամպեր կուտակուիլ այդ կըրթական հաստատութեան վրայ։ Մէկ տարի առաջ Կ. Պօլսէն հոս ժամանեց Թէրզեան պատրիարքի կողմէ ղրկուած Ժակ Թոփուզեան եպիսկոպոսը, որ նշանակուած էր Մուշի կաթոլիկ հայոց առաջնորդ։ Տեղացիները հայ-կաթոլիկ սահմանադրութեան որոշ տրամադրութեան հիման վրայ պահանջեցին, որ իրենց առաջնորդը լինի ընտրովի, այլ ոչ նշանակովի։ Վէճի հետևանքով՝ կաթոլիկ առաջնորդարանը տարիէ մը ի վեր գոց կը մնայ։ Թոփուզեան եպ. կապրի առանձին տան մը մէջ։ Ի՞նչ ներքին կեանքով՝ առայժմ զանց կառնենք գրել։ Իսկ նախկին փոխանորդ հայր Անտօն, որ միանգամայն Մխիթարեան միաբանութեան Վիեննայի աբբահօր փոխանորդն էր և Մուշի Մխիթարեան վարժարանաց ղեկավար տեսուչը, նոյնպէս ստիպուեցաւ հ. Թոփուզեանին գալէն յետոյ թողուլ առաջնորդարանը և ապրիլ առանձին։

Հիմա կը հաւաստեն, որ Թոփուզեանի պրօպագանդի շնորհիւ՝ գործը հասեր է հոն, որ վերջին շաբթուս Վիեննայէն հեռագիր մը կը հրամայէր հ. Անտօնին գոցել Մխիթարեան վարժարանները և ինք մեկնիլ Էնկիւրի, հոն իրեն տրուած պաշտօնը ստանձնելու։ Մի քանի փոխադարձ հեռագիրներով հազիւ հ. Անտօնը կարողացեր է իր մեկնումը յետաձգել, իսկ վարժարաններու բացման խնդիրը կը մնայ առկախ… Կը հաւաստեն, որ Վիեննայի միաբանութեան և աբբահօր՝ մուշեցիներուն տուած խորհուրդն այն է, որ Մուշի հայ-կաթոլիկները ընդունին Թոփուզեան եպիսկոպոսին առաջնորդութիւնը և հպատակին լատին կղերական կարգերու, այլապէս՝ Հռոմի Պիոս X պապի խիստ հրամանն այն է, որ մշեցին պիտի մի անգամ ընդմիշտ զրկուի իր այդ կրթական հաստատութիւններէն։ Մշեցիները պատասխաներ են, թէ իրենք աղքատ են, բայց կը սիրեն դպրոցը, իսկ լատին կղերը և անոր ճիզվիտութիւնը՝ բնաւ։

Թախիծ

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՑԱՒԱԿՑԱԿԱՆ ԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ ՈՒՂՂՎԱԾ «ՄՇԱԿԻ» ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

(Հեռագրով)

Ղաթարի հանք, 31 օգոստոսի

Անկեղծօրէն ողբում եմ անշահասէր աշխատաւոր, վետերան, Արծրունու պատգամների հաւատարիմ Յովհ. Տէր-Մարկոսեանի մարած կեանքը։ Յովհ. Դանիէլեան

—

(Հեռագրով)

Ելենովկա, 1 սեպտ.

Սրտագին կսկիծով ողբում եմ թանգագին «Մշակի» վետերան Յովհ. Տէր-Մարկոսեանի մահը։ Հանգիստ սիրելի աշխատաւորի աճիւնին։ Հայրապետ Բուռնազեան

—

Թարթառ, 29 օգոստոսի

Յայտնում եմ խորին ցաւակցութիւնս սիրելի Յովհ. Տէր-Մարկոսեանի վաղաժամ մահվան առիթով, որը ինչքան համեստ և աշխատասէր, նոյնքան շիտակ և անշեղ դրօշակակիր էր Արծրունու գաղափարների և առաջադէմ դպրոցի։ Նրա համար այդ շաւղին գոյութիւն չունէին կօմպրոմիսները։

Յարգանքս նրա անուան և գերեզմանին, որոնք միշտ օրինակ և կրթիչ կարող են լինել շատերի համար։ Մարդիկ ծնվում են շիտակ, մաքուր աշխատանքի համար և այդ շաւղին չեն վախենում ոչ արգելքից, ոչ մահվանից։ Նրանց կեանքն ու մահը, ինչքան էլ համեստ և թէկուզ փոքր լինեն, հաւասար է շատ «մեծութիւնների» կեանքին ու մահվան և աւելի կրթիչ։

Յարգանքս համեստ և շիտակ Յովհաննէսի գերեզմանին։ Գ. Մուրադեան

—

Թիֆլիս, 2 սեպտեմբերի

Ընդունեցէք խորին ցաւակցութիւնս Յ. Տէր-Մարկոսեանի մահվան առիթով։ Հանգուցեալի հետ ես բաղդ եմ ունեցել մի անգամ զրուցելու և նրանից հայրական խրատներ լսելու։ Յարգանք Գր. Արծրունու հաւատարիմ աշակերտի յիշատակին։

Գ. Տէր-Ռուբինեան

Սարեպտա կայար., 27 օգոստ.

Սրտի կսկիծով կարդացի «Մշակի» անմոռանալի հրատարակչի՝ Յ. Տէր-Մարկոսեանի մահվան մասին։ Յայտնում եմ խորին ցաւակցութիւնս՝ բարի մարդու վաղաժամ կորստի առիթով։ Գաբրիէլ Պօղոսեան

—

Հին-Նախիջևան, 26 օգոստոսի

Յաւերժ յիշատակ «Մշակի» վետերան Յ. Տէր-Մարկոսեանին։ Նա համեստ գործիչ էր, գաղափարի իսկական զինւոր և իդէալի ախոյեան. Նրա անունը անմոռաց կը մնայ մինչև յաւիտեան։

Օր. Լ. Տ.-Ստեփանոսեան

ՄԱՄՈՒԼԸ Յ. ՏԷՐ-ՄԱՐԿՈՍԵԱՆԻ ՄԱՍԻՆ

«Մշակ» հայ լրագրի խմբագրութիւնը մի անփոխարինելի կորուստ կրեց յանձին իր հրատարակիչ և խմբագրութեան անդամ Յովհ. Տէր-Մարկոսեանի։ Հանգուցեալը «Մշակի» հնագոյն աշխատակիցներից էր։

Նա սկսել էր իր գործունէութիւնը լրագրի առաջին տարիներից՝ իրա Գրիգոր Արծրունու ղեկավարութեան տակ։ Հանգուցեալը մասնակցում էր հայկական հասարակական գործերին և աչքի էր ընկնում իր մեծ աշխատասիրութեամբ։ («Зак. Рѣчь»)

—

Համակրական տողեր նուիրված են հանգուցեալ Յովհ. Տէր-Մարկոսեանին նաև «Баку», «Каспій» և «Пр.Край» թերթերում։ Նոյնպէս «Հովիտ», «Հորիզոն» և «Կովկասի Լրաբեր» թերթերի մէջ տպված են համակրական յօդուածներ հանգուցեալի մասին, միայն վերջին երկուսը չեն կարողացել պահել իրանց՝ պատշաճ կօրրէկտութեան մէջ և օգտւել են քաղել առիթից՝ «Մշակի» հասցէին անտեղի յարձակումներ գործելու՝ մեղանչելով պատմութեան դէմ։

—

Ի լրումն հանգուցեալ Յ. Տէր-Մարկոսեանի մասին մամուլի մէջ երևցած տեղեկութիւնների՝ հարկ ենք համարում յայտնել, որ հանգուցեալը մի քանի տարի եղել է Հայոց Հրատարակչական Ընկերութեան խմբագրական մասնաժողովի նախագահ, Կովկ. Հայոց Բարեգործ. Ընկերութեան խորհրդի անդամ և Թիֆլիսի արհեստագիտական դպրոցի ուսուցիչ։

ԷԼԵԿՏՐԱՔԱՐՇԻ ԳՈՐԾԱԴՈՒԼԸ ԹԻՖԼԻՍՈՒՄ

Էլեքտրաքարշի ծառայողների գործադուլը Թիֆլիսում շարունակվում է տակաւին, և դեռ անորոշ է, թէ ե՛րբ կը վերսկսվեն աշխատանքները։ Որքան էլ որ արդարացի լինեն ծառայողների ներկայացրած պահանջները, բայց փաստը մնում է փաստ, որ տուժողը ազգաբնակութեան աւելի աղքատ դասակարգերն են։ Պէտք է տեսնել առաւօտները՝ թէ ի՛նչ թւով գիւղացի, բանւոր, արհեստաւոր՝ ոտքով կայարանից դիմում են քաղաք, կամ ընդհակառակն՝ քաղաքի հեռաւոր ծայրերից ոտքով, յոգնած, գնում են կայարան։

Առանձնապէս գործադուլի պատճառով դրութիւնը զգալի եղաւ երէկ, սեպտեմբերի 2-ին, աշակերտութեան համար, որ դատապարտված էր վաղ առաւօտ դպրոց շտապել ուսման առաջին օրը չուշանալու համար, անցնելով ընդարձակ տարածութիւն ոտով։

Մանաւանդ այդ տանջանքը զգալի էր աշակերտ-աշակերտուհիների համար, որոնք բնակվում են քաղաքի ծայրերում։ Միժամանակ, հնում, քաղաքի հեռաւոր թաղամասերում—օրինակ Հալաբարում, Օրթաճալայում, Վէրայում, և այլն—երթեւեկում էին էժան հանրակառքեր։ Այժմ չէր արգելում քաղաքային վարչութեանը մտածել դրա մասին գոնէ գործադուլի ընթացքում։

—

Էլեքտրաքարշի կենտրոնական վարչութեան կողմից՝ Բրիւսէլից օգոստոսի 31-ից ստացվեց այսպիսի պատասխան հեռագիր.

«Ծառայողների պահանջների իրագործումը կաւելացնէ ծախքերը 225,000 րուբլով, որ անկարելի է թոյլ տալ։ Սակայն վարչութիւնը որպէսզի ապացուցանէ իր բարի կամքը, չը նայած վերջին տարիներում ընկերութեան կրած ծանր հանգամանքներին, համաձայնում է հետևեալ ամենածայրայեղ զիջումներին.

1) Աւելացնել ամեն տարի տրվող աշխատավարձի ընդհանուր գումարը 5%-ով, որպիսի յաւելումը կորոշվի համաձայնութեան հիման վրա։

2) Ամենամեայ 10-օրեայ արձակուրդը ռոճիկի պահպանութեամբ, բայց հերթով և այն պայմանով, որպէսզի բացակաների փոխարէն հարկ չը լինի հրաւիրել նոր ծառայողներ։

3) Աւելացնել աշխատավարձը ամեն 6 ամիսը մի անգամ 5 կոպէկով մինչև որոշ սահմանը։

4) Պահեստի ծառայողը ստանում է ամբողջ ռոճիկը (աշխատարձը)։

5) Ձրի ընտանեկան տոմսակներ, բայց մի ընտանիքից երկու հոգուց ոչ աւելի, լուսանկարներով վաւեր են ամեն օր, բացի կիրակի և տօն օրերից։

6) Երեխաների աշակերտական տոմսակներ (սահմանափակ)։

7) Բժշկական օգնութիւնը բարելաւելու համար ընկերութիւնը լրացուցիչ յատկացնում է 5000 ր. տարին։

8) Զգեստի վերաբերութեամբ ընկերութիւնը համաձայն է։

9) Ինչ վերաբերում է կենտրոնական կայարանի ծառայողների պահանջներին հաշմանդամ լինելու վերաբերեալ, ընկերութիւնը կը ղեկավարվի օրէնքի թելադրանքով։ Մնացածների նկատմամբ ընկերութիւնը չէ կարող համաձայնել։ Այդ զիջումները — 70,000 րուբլի — աւելանում են 20%-ով։

Ընկերութեան ներկայ առաջարկութիւնը—անմիջապէս վերսկսել աշխատանքները—եթէ ընդունվի, այն ժամանակ վարչութեան լիազօրը անմիջապէս կը մեկնէ Թիֆլիս համաձայնութեան մանրամասնութիւնները մշակելու համար։

Սակայն գործաթող ծառայողները չընգոնեցին վերոյիշեալ պայմանները։

Ծառայողները ներկայացրել են իրանց ստորև վերջին պայմանները.

1) Միանուագ աւելացնել բոլոր ծառայողների ռոճիկները $10\,^0/_0$-ով։

2) Տալ ընտանեկան ձրի տոմսակներ առանց սահմանափակումների։

3) Բժշկական օգնութիւնը տարածել նաև ընտանիքների անդամների վրա։

4) Պարբերաբար աւելացնել ամէն վեց ամսից յետոյ 10-ական կոպէկ մինչև 1 ր. 50 կոպէկ։

5) Բոլոր տօն օրերը տալ մէկուկէս օրավարձ։

6) Զգեստ դռնապաններին։

7) Վճարել գործադուլի օրերի համար։

—

Առանձին ուշադրութիւն է գրաւում էլեկտրաքարշի Թիֆլիսի վարչութեան այժմեան տնօրէնի պաշտօնակատար Թահտաճեանի խելացի տակտիկան, շնորհիւ իր երկարամեայ փորձառութեան։ Նա հաւասարապէս յարգելի անձն է ներկայումս էլեկտրաքարշի ծառայողների և կենտրոնական խորհրդի անդամների կողմից։

ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ ԳԱՒԱՌԻՑ

—

Այժմ գոհ ենք

Զաքաթալա, 29 օգոստոսի

Երկար երաշտութիւնից յետոյ՝ այսօր առաւօտեանից սկսեց տեղալ մեղմ, մանր անձրև, որ համակեց ամբողջ ազգաբնակութեան սրտերը անհուն ուրախութեամբ ու ցնծութեամբ։ Եթէ այսպէս տևէ մի քանի օր, գետինը կը յագեցնէ իր ծարաւը և հնարաւորութիւն կը տայ տաւարին 2—3 ամիս կուշտ փորով վերադառնալու արօտատեղից տուն։

Համարեա մի շաբաթվայ ընթացքում դատարկվեց մեր քաղաքը. ամարողներն ու ուսանողները շտապեցին իրանց բնակավայրերը, և քաղաքը կասես կերպարանափոխվեց, երէկվայ ուրախ Զաքաթալան դարձաւ մի ամենայետ ընկած գիւղ... Միայն գլխաւոր հրապարակի վրա կը տեսնէք բազմաթիւ Թուրք ու լեզգի գիւղացիների, որոնք՝ փոխանակ աշխատելու իրանց առօրեայ բազմաթիւ հոգսերը հոգալու՝ իրար միս են ուտում ու գալիս օրերով դատարանների դռները մաշելու։

Կար ու ձևի դպրոցի հայ վարժուհին մի շատ յարգելի պատճառով արձակված է պաշտօնից։ Հայոց ծխական դպրոցի համար էլ վարձված են նոր ուսուցիչ-ուսուցչուհիներ. սեպտեմբերի 1-ին պաշտօնապէս կը բացվեն դպրոցի դռները։ Տայ Աստուած, որ ցեցը կրկին բուն չը դնէ նրանց մէջ, և աջողութեամբ տանեն իրանց վրա ընդունած սուրբ պարտականութիւնը, գործը։

Սօյգադէ

—

Լուրեր Իգդիրից

Իգդիր, 28 օգոստոսի

◆ Շարունակ նոյնը, շարունակ նոյնը...

Եթէ աշխարհն անգամ քանդվի, այս գիւղը առաջ չի գնայ։ Այո, համաձայն ենք՝ առաջ կերթայ արտաքին զարդարանքի կողմից, օրինակ՝ զօրանոցներ կը շինեն, գիւղից դուրս ճանփաները կը չորացնեն, սարերից աղբիւրներ կը բերեն և այլն և այլն։ Հապա ներքինը։

«Էշն էլի էն էշն ա, փալանն ա փոխել»...

Ամեն օր ծեծ, կռիւ, ղալմաղալ, գանահարում թէ «փոքր» և թէ «մեծ» մարդկանց, «ազգի փրկիչների»։

Երէկ չէր, որ մեր ներկայութեամբ ջարդի ենթարկվեց հոգաբարձու Աղախանեանը հասարակ վէճի պատճառով։ Իսկ մեր թամաշչի բազարնիկների անզուսպ ծիծաղը... Տէր Աստուած, մինչև ե՞րբ այս ագիտութիւնը գիտուն կոչված անգէտների աշխարհում...

◆ Իր հայրենի գիւղն է եկել Թիֆլիսի դերասանուհիներից տիկ. Սօֆիկ (Սարգսեան), որը օգոստ. 27-ին սիրողների հետ մի ներկայացում տուեց բարեգործական նպատակով։

◆ Կ. Հ. Բ. Ընկ. Իգդիրի ճիւղի գր.-ընթերցարանը ողորմելի վիճակումն է։ Լրագիրներ կան, կարդացողներ չը կան։ Իսկ տասնեակ խմբերով մեր «զարգացած» ջահէլները «բուլվարում» (այգի) զբօսանքներ են անում։ Ո՞վ «խշտահ» ունի «կազէթ» կարդալու։

◆ Ցերեկները խայտառակ տօթ, փողոցները՝ կեղտոտ, խմելու ջուրը էլ աւելի կեղտոտ։ Գիշերներն են, որ մի քիչ հովեր են լինում։ Կովկասցի

—

Նեղեբը Ախալքալաքում

Ախալքալաք, 24 օգոստոսի

◆ Ախալքալաքի շրջանի հայ գիւղացիութիւնը աչքի առաջ ունենալով այն հանգամանքը, որ տարվայ անաջող բերքի պատճառով խոտի, ցորենի ու գարու գները բարձրացել են նկատելի չափերով, ներկայումս սկսել է իր եղջիւրաւոր անասունները խումբ-խումբ քշել այս ու այն կողմ՝ էժան վաճառելու նպատակով։ Այդ դրութեան անմիջական հետևանքն այն է լինելու, որ մեր շրջանի շինականը սնանկանալու է և ընկնելու վաշխառուների ճանկը։

◆ Ներկայումս մեզանում մի սայլ խոտի (1 սայլ խոտը=35 փութ) գինը բարձրացել է 15 ր., 1 սոմար (20 փութ) ցորենն արժէ 30—35 ր., մի սոմար (16 կոտ) գարին 15 ր.։

◆ Մեր շրջանի անաջողութեան պատճառը տարվայ չորային ու երաշտ անցնելն է։ Բայց մեր գաւառը, պէտի նկատել, ջրառատ երկիր է։ Կարող են երկու-երեք գիւղեր միանալով՝ ջրամբար շինել կենտրոն տեղերում և երաշտ տարիներում առատօրէն օգտվել նրանից։

Ցար. Տէր-Սիմէօնեան

—

Անաջող տարի

Սիսիան, 20 օգոստ.

Սիսիանի շրջանի կենսական մթերքների բերքն այս տարի նկատելի չափով նուազ եղաւ։ Ինչպէս ցորենի և գարու, նմանապէս և խոտի ու դարմանի գները բաւական բարձրացել են։ Գիւղացիք շուարած մնացել են, չիմանալով ի՛նչպէս պահել իրանց եղջիւրաւոր անասուններին առաջիկայ ձմեռվայ ընթացքում։ Շինականների յուսահատութիւնն այն աստիճանի է հասել, որ նրանք մտածում են ձեռք առնել պանդխտութեան ցուպը։ Այդ ամենը հասկանալի կը լինի, երբ ի նկատի ունենանք, որ Սիսիանը ընդհանրապէս յայտնի չէ իր այգիներով ու պտղատու ծառերով։

Վաշխառուների համար շատ աջող տարի է բացվել։ Շ. Գ.

—

Քաղաքագլխի մահից յետոյ

Սղնախ, 26 օգոստոսի

Ինչպէս յայտնի է, Սղնախի քաղաքագլուխ Վարդան Ենիկոլոփեանը ամսիս 18-ին վախճանվեց տիֆ հիւանդութիւնից։

Նրա մարմինը ամսիս 14-ին բերին Թիֆլիսից այստեղ և մեծ շքով հողին յանձնեցին ամսիս 16-ին՝ տեղիս ս. Կարապետ մայր-եկեղեցու գաւթում՝ ս. Աստուածածին մատուռի մօտ։

Սղնախը մինչ օրս նման փառաւոր թաղում տեսած չունէր։

Լսում ենք, որ քաղաքը հանգուցեալի հիւանդ մօր համար նշանակել է ամսական 25 ր. մինչև իր մահը։

Ենիկոլոփեանի մահվան պատճառով քաղաքագլխի պաշտօնակատարն է դառնում Նիկողայոս Տէր-Մաթէոսեան, որն արդէն երկու անգամ կատարում է այս պաշտօնները։ Աշնան նշանակված են ձայնաւորների ընտրութիւնները, որոնք աղմկալի պէտք է լինեն, քանի որ ընդունել են ազգային սուր բնաւորութիւն։ N. N.

—

Բաւարար բերք

Հաղբատ, 27 օգոստոսի

Այս տարի, ինչպէս և անցեալ տարի, հունձը մեզանում բաւարար էր։

Դաշտային աշխատանքները վերջացան մեր շրջանում, իսկ լեռնալանջերի արտերինը դեռ ևս ոչ։

Հաղբատեցին, որ միշտ իր հացի պաշարի պակասորդը գնելիս է եղել շրջակայ գիւղերից կամ Ռուսաստանից եկած դաշտ ալիւրից, այս երկրորդ տարին է, ինչ ազատ է գնել դուրս փողով հացի մանգալուց։

Մեր դպրոցը փակման վտանգի առաջ է գտնվում։ Դպրոցի աղքատիկ գրադարանը ագիտութեան զոհ է գնացել։ Ո՞ւր են մեր նորընտիր հոգաբարձուները, որոնք փայլուն ճառեր արտասանեցին ու ծրագիրներ մշակեցին ապագայ պարտադիր դպրոցի համար։ Ար. Պր.

—

Տիզակի աննախանձելի վիճակը

Թաղլար գիւղ, 23 օգոստոսի

Թաղլար գիւղը, որ իր մեծութեամբ առաջինն է ամբողջ Տիզակում, բոլորովին կտրված է դրսի աշխարհի հետ յարաբերութիւն ունենալուց։

Այս գիւղի ժողովուրդը անց է կացնում զուտ նահապետական կեանք։ Յիսուն տարի առաջվայ փայտէ «ալաթը» (արօրը), «կամնը ու կեռը» նոյն դրութեան մէջ են մնում մինչև օրս՝ առանց մի քայլ անգամ առաջդիմելու և մարդկանց աւելորդ ու ծանր աշխատանքից ազատելու։

Տիզակի գիւղացիութիւնը ընդհանրապէս, իսկ Թաղլարինը մասնաւորապէս ոչ միայն գաղափար չունեն գիւղատնտեսութեան մասին, այլ անգամ չը գիտեն, թէ ի՛նչ է նշանակում գիւղատնտեսութիւն։

Ամբողջ գաւառը խարխափում է ագիտութեան սպանիչ ճիրաններում։ Զը կարողանալով օգտվել իր ոսկէ հողից, մեր շինականը աշխատելիս նմանվում է հողի հետ խաղացող երեխայի։

Ո՞ւմ համար են մեր դիպլօմաւոր գիւղատնտեսները, եթէ ոչ այսքան տառապող գիւղացիութեանը։ Սակայն հրաշ է դրանց մուտքը տեղս։

Ամբողջ գաւառում չը կայ մի գր.-ընթերցարան, չը կայ ոչ բժիշկ, ոչ դեղատուն, ու խեղճ գիւղացին ստիպված է լինում հիւանդին տանել Շուշու գաւառի Թաղավարդ գիւղը կամ Կարիագինօ։ Ու բնական է, որ հիւանդների մի մասը վախճանվում է հէնց գնալ-գալուց կրած նեղութիւններից։

Տեղիս ծխատէր քահանայի ցուցակի համաձայն՝ այս տարվայ ընթացքում միայն կարմրուկ ու ծաղիկ հիւանդութիւնների տարած զոհերի թիւը Թաղլար գիւղի երեխաների շրջանում անցնում է 240-ից։ Մահացած երեխաների տարիքը երերվում է 1—10-ի միջև։ Հիւանդացածներից ոչ մէկը չէ տարված բժշկի մօտ։ Արդեօք մոռացութեան չէ՞ մատնված խեղճ Տիզակը։

Ցրարի

—

Բոստանների «չոռը» եւ թանգութիւնը

Հին-Նախիջևան, 22 օգոստոսի

Այս տարի երկարատև երաշտը զգալի վնասներ պատճառեց նաև սեխի ու ձմերուկի բոստաններին։ Հազարաւոր բոստաններ, որոնց վրա նշանաւոր գումարներ են ծախսվել, այսօր նայողի վրա տխուր ու ճնշիչ տպաւորութիւն են թողնում իրանց սևացած, փոշոտած, մնձրված տեսքով. իսկ «թաղերի» կամ բոյսի վրա աճած պտուղները հացի գնդերի, սագի ծայրի մեծութեան են մնացել. պտուղների պոչերը չորացել, իրանք դեղնել, կակղել, որոնց գործածելը ջերմ ու տենդ միայն առաջ կը բերէ։

Քառամսեայ շոգերն են առաջացրել այդ «չոռ» կոչված հիւանդութիւնը, որ սևացրել է սեխի ու ձմերուկի բոստանների հօծ մեծամասնութիւնը։ Շատ քիչ բոստաններ միայն զերծ են մնացել համատարած այդ «չոռից»։

Թանգութիւնը ընդհանուր է Նախիջևանում. սեխի ու ձմերուկի կամ մեղրապուտի փութը 3 կոպէկով է ծախվում, պուդով՝ 1 ր. պուդը։

Զը նայած խաղողի առատ բերքին, վերջինիս պուդը այժմ վաճառվում է 1 ր. 20 կ.—1 ր. 40 կոպ., իսկ փունտը 4 կոպէկ։ Ցորենի պուդը արժէ 1 ր. 40 կոպ., իսկ դարմանի կատարեալ սով է. մէկ բեռ դարմանը, որ անցեալ տարի ծախվում էր 60 կ., ներկայումս արժէ 1 ր. 20 կ.։ Պամիդօրի փունտը, որ անցեալ տարի արժէր 1 կոպ., այժմ 5 կոպէկով է ծախվում, 3 հատ բադրիջանը 5 կ., գետնախնձորի փունտը 3—4 կոպ., սոխինը 3 կոպ., 2 հատ վարունգը 3 կոպ., թաց պանիրի պուդը 4 ր. 50 կ., կարագինը 16-18 ր., ոչխարի մսի փունտը 13 կ., և շարունակ էլ տակայից 1 կ. աւել են վաճառում մսավաճառները և բողոքողին այլևս միս չեն ծախում։ Քաղաքի բոլոր մսավաճառները Թուրքեր են և մեծ խտրութիւն են դնում վաճառելիս հայի ու Թուրքի միջև. ամենալաւ միսը վաճառում են Թուրքերին, այն էլ որքան նրա քէֆը կուզէ՝ $^1/_4$, $^1/_2$, 1 փունտ, իսկ հայը՝ նախ այդ քանակութեամբ միս առնելու իրաւունքից զուրկ է, երկրորդ՝ ոսկորներով ու մնացորդներով են հիւրասիրում աղքատ, արհեստաւոր ու միջին դասակարգին պատկանող հային։ Ա. Տ.-Ստեփանոսեանց

ԳԱՒԱՌԱԿԱՆ ԹԱՏՐՕՆԻ ՇՈՒՐՋԸ

—

Գօրիս, 24 օգոստոսի

Այս ամառ քաղաքումս աւելի քիչ ներկայացումներ տրվեցին, քան անցեալ տարիներում։

Գօրիսը իբրև մի հեռաւոր անկիւն, առհասարակ անմատչելի է մեր դերասանների համար, որոնք երկաթուղուց մինչև տեղս հասնելը ստիպված են մեծամեծ ծախսեր անել ու վերադառնալ։

Տեղիս սիրողները առհասարակ մեծ սիրով են վերաբերվում բեմին և բարեգործական նպատակներով ներկայացումներ տալուն, և եթէ մի պատրաստի ձեռք նրանց ղեկավարի, միշտ էլ աջող և մուտքի կողմից ապահով ներկայացումներ կարելի է տալ։

Իբրև 7 տարվայ ականատես և ղեկավար սիրողների խմբի, առհասարակ նկատել ենք, որ թէ մեր և թէ եկւոր դերասանների ներկայացման մուտքերը նիւթականի կողմից եղել են լաւ ու հասարակութիւնը սիրայօժար կերպով հանդիսատես է եղել տրվող պիէսներին մեծ սիրով։ Գաւառում առհասարակ բեմի և ներկայացման ամբողջ զարդը պէտք է վերագրել մեր ուսուցիչներին։ Եւ եթէ նրանք աւելի խնամքով և սիրով վերաբերվեն և մեծերի դըպրոց բեմին, մեծ գործ արած կը լինեն մեր բեմական արուեստի նկատմամբ։ Մենք հեռու ենք ուսուցիչներից դերասանութեան պահանջ դնելուց, սակայն այդ մէկն էլ թող աւելանայ նրանց կատարելիք այն ձեռնարկութիւնների վրա, որոնք պահանջվում են նրանցից գաւառական մութ աշխարհում։

Ներկայացումը, երեկոյթը, դասախօսութիւնը և զրոյցներն էլ մի մեծ պլիւս են մեր առաջխաղացութեան նկատմամբ։

Սազանդարեան

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

◆ «Н. Вр.»-ում կարդում ենք. «Այս օրերս վերջնականապէս կը պարզվի այն հարցը, թէ կը գա՞յ արդեօք Կովկասի փոխարքայ կոմս Ի. Ի. Վօրօնցօվ-Դաշկօվը Թիֆլիս մեկնելուց առաջ։ Ներկայումս կոմսը գտնվում է իր կալուածքում՝ Տամբօվի նահանգում։ Դրա հետ միասին կը վճռվի, թէ մինիստրների խորհրդի ո՞ր նիստում կառաջադրվի Թիֆլիսում պօլիտեխնիկում բանալու խնդիրը։ Ինչպէս ներկայ հարցը, այնպէս և ուրիշ խնդիրներ, որոնք կապ ունեն Կովկասը կառավարելու հետ, մտադրութիւն կար քննել մինիստրների խորհրդի յատուկ նիստում կոմս Վօրօնցօվ-Դաշկօվի մասնակցութեամբ։ Թիֆլիսում պօլիտեխնիկական ինստիտուտ բանալու օրինագծի մշակութիւնը արդէն աւարտված է կովկ. ուսումն. շրջանի հոգաբարձուի անմիջական ղեկավարութեամբ։ Փոխարքայի ներկայացուցիչ սենատոր Նիկոլսկիի Պետերբուրգ վերադառնալը կովկասեան Հանքային Ջրերից սպասվում է սեպտեմբերի կէսին»։

◆ Թիֆլիս է եկել կառավարութեան յանձնարարութեամբ ինժեներ-տեխնոլոգ Միքայէլ Հախումեան ուսումնասիրելու մեր երկրի բամբակագործութեան և շերամապահութեան կարիքները։ Նրա ժողոված նիւթերը նկատողութեան կառնվեն այն խորհրդակցութիւններում, որոնք պէտք է տեղի ունենան ռուս-գերմանական առևտրական նոր դաշնագիր մշակելու ժամանակ։ Հախումեանը կայցելի մեր երկրի այն շրջանները, որտեղ մեծ զարգացում ունեն յիշված արդիւնաբերութիւնները։

◆ Մասնագէտ Ի. Վ. Բելգօվսկի, որը յուլիս ամսին եկել էր մեր երկիրը կովկասեան ոչխարաբուծութիւնը ուսումնասիրելու նպատակով, վերջացրել է իր այս տարվայ զբաղմունքները և այսօր վերադառնում է դէպի հիւսիս։ Նա եղել է Ալեքսանդրապօլի և Էջմիածնի գաւառների լեռնամասերում, նաև Կարսի նահանգի մի քանի գիւղերում։ Իր ուսումնասիրութեան շարունակութիւնը նա մտադիր է անել յաջորդ 1914 թւին։

◆ Սեպտ. 15-ին Բագւում կայանալու է ազգաբնակութեան երեք-օրեայ վիճակագրութիւն։

◆ Էջմիածնից Թիֆլիս են վերադարձել նոր ձեռնադրված Թիւրքահայ եպիսկոպոսները՝ Ռումինիայի առաջնորդ Գնէլ եպիսկ. Գալէմքեարեան, Արմաշի առաջնորդ և դըպրանոցի վերատեսուչ՝ Մեսրոպ եպ. Նարոյեան և Ադրիանուպօլսի առաջնորդ Ղևոնդ եպ. Դուրեան։ Դրանցից առաջին երկուսը կիրակի, ամսիս 1-ին այցելեցին «Մշակի» խմբագրատունը։ Նրանք երէկ, ամսիս 2-ին, երեկոյեան գնացքով մեկնեցին Բաթում, վերադառնալու համար իրանց պաշտօնատեղիները։

◆ Երէկ արձակուրդից վերադարձաւ և ստանձնեց իր պաշտօնը քաղաքային վարչութեան անդամ Միք. Աթաբէգեան։

◆ Այսօր քաղաքային վարչութեան անդամ Ժուրուլին և քաղ. վարչ. քարտուղարը մեկնում են Կիէվ՝ իբրև Թիֆլիսի ներկայացուցիչներ մասնակցելու քաղաքային գործիչների համագումարին։

◆ Թիֆլիսումն է ներկայումս Անդրկովկասի ռուս ազգաբնակութեան պատգամաւոր Մ. Սկօբելևը, որ այս ամառ շրջագայել է 20 գիւղեր Բօրչալուի և Թիֆլիսի նահանգներում և Կարսի շրջանում, ծանօթանալով այդ տեղերի ռուս ազգաբնակութեան կարիքների հետ։

◆ Այս օրերս Թիֆլիսի վրայով Վան է մեկնել Կ. Պօլսում հրատարակվող «Թանին» թերթի խմբագիր Իբրահիմ Հակկըն։

◆ Պետական Դումայի անդամ Ջխէիձէն Թիֆլիսից մեկնեց Սղնախի և Թէլաւի գաւառները։

◆ Եղանակները Թիֆլիսում սկսում են զովանալ։

◆ Երէկ Թիֆլիսի բոլոր կրթական հաստատութիւններում առաւօտեան կատարվեցին մաղթանքներ, որից յետոյ սկսվեց ուսումը։

◆ Այս տարվայ յունվարի 1-ից մինչև սեպտեմբերի 1-ը Թիֆլիսի Բուսաբանական այգին այցելել են 63,000 հոգի։

◆ Թիֆլիսում հայ դերասանական խմբի կանոնաւոր ներկայացումները Արտիստական թատրօնում կը սկսվեն հոկտեմբերի սկզբից։

◆ Այս տարի Արքունական թատրօնում օպերային ներկայացումները կը սկսվեն սեպտեմբերի 15-ից սովորական «Жизнь за Царя» օպերայով, դիրիժեօր Պալիէվի ղեկավարութեամբ։

◆ Արդարադատութեան մինիստր Շչէգլօվիտօվը ներկայումս Հիւսիսային Կովկասումն է։

◆ Սեպտ. 18-ին Թիֆլիսի դատաստանական պալատում նշանակված է իշխ. Դադիանիի մեծաղմուկ գործի քննութիւնը, որի առիթով կանչվում են 176 վկայ։

◆ Վրաց դրամատիկական խմբի ներկայացումների սէզօնը սկսվելու է սեպտ. 15-ից։

◆ Զինւորական մի յատուկ մասնաժողով Թիֆլիսի երկրորդ կադէտների կորպուսի համար հողաբաժին է ընտրել Լօտկիս-Գօրա կոչված արուարձանում։

◆ Զինւորական մինիստրը 225,000 ր. է խնդրում յանձնելու Թիֆլիս քաղաքին՝ զօրքերի գործած ջրի համար։

◆ Օգոստոսի 30-ին Թիֆլիսում, Վէրայի քաղաքամասում, մի կին հիւանդացաւ խօլերայի կասկածելի նշաններով։ Նա ներկայումս գտնվում է սուր վարակիչ հիւանդների հիւանդանոցում։

◆ Այս կիրակի նշանակված է Թիֆլիսի Հասարակական ակումբի դասախօսների ընդհանուր ժողովը դասախօսութիւնների ցուցակ կազմելու համար։ Ակումբի ձմերային սէզօնը սկսվելու է սեպտեմբերի վերջերին՝ ակումբի արմատական վերանորոգութիւնը աւարտվելուց յետոյ։

◆ «Баку»-ի ասելով՝ Բագւում այս օրերս սպասվում էր Պետական Դումայի անդամ Կերէնսկին, որ այնտեղ մի քանի դասախօսութիւն է կարդալու 1-ին Դումայի գործունէութեան մասին։

◆ Բագւում Կուլտուրական Միութեան նոր շէնքի կառուցումը աւարտման մօտ է։

◆ Ռօմանիում օգ. 27-ից Մանթաշեանի նաւթահորերից մէկը ֆօնտան է խփում, որ օրական տալիս է մօտ 400,000 պուդ նաւթ։

◆ Բագուի հարուստ Մուրտուզա Մուխտարօվը հիւանդ դերասան Արաբլինսկիին նուիրել է 700 րուբլի՝ բժշկվելու համար։ Բացի դրանից Մուխտարօվը յանձն է առել վճարել միւս ծախքերն եւ՝ բժշկութիւնը շարունակելու դէպքում։ Իսկապէս նախանձելի է յիշեալ վերաբերմունքը Թուրք հարուստի կողմից դէպի մի հիւանդ դերասան, եթէ ի նկատի ունենանք հայազգի հիւանդ Գալֆայեան դերասանին։

◆ «Н. Вр.»-ի ասելով, Բագուի գործարանային տեսուչը միջնորդ է դարձել, որպէսզի Նօբէլի և Բէնկէնդորֆի նաւթահանքերի վարչութիւնները բաւարարութիւն տան գործաթող բանուորների պահանջներին։

ՈՍՏԻԿԱՆԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

—

◆ Օգոստոսի 31-ի առ. ժ. 8-ին օդագնաց Բէլուրովը ձիարշաւատեղում փորձեր կատարելիս ընկաւ, փշրեց աէրօպլանը (150 ր. վնաս), բայց ինքը մնաց անվնաս։

◆ Օգոստ. 31-ի երեկոյեան Սմբատ Մուրադեանը 9-րդ ոստիկանատուն տարաւ $1^1/_2$ ամսական երեխայի, որին նա գտել էր Կովկ. Օֆ. Տնտ. Ընկ. խանութի մայթի վրա։ Երեխային ուղարկել են Օլգինսկի ծննդաբերական ապաստարանը։

◆ Օգոստ. 31-ին քաղաքապահ մի ոստիկան 10-րդ ոստիկանատուն տարաւ մի նորածին աղջկայ՝ Տատիանօվսկայա փողոցից։

◆ Օգոստ. 31-ին զինւորական բժիշկ Միք. Արտէմովիչի բնակարանից—Սուդէբնայա փող. № 31—իր ասելով յափշտակել են 59 ր. կանխիկ դրամ, 400 ր. արժեցող մատանի և զանազան ոսկեղէն 510 ր. գումար։ Կասկածը նա ձգում է իր սպասաւոր բօզիքէնդցի Ցակօբ Սարգսեանի վրա։

◆ Օգոստ. 31-ին երկու եղբայրներ Իսմայիլ Կուրօ-օղլին և Մոլլա Կուրօ-օղլին, իրանց ազգական օրիորդին վիրաւորանք հասցնելուն համար, ոմն Միրզա Ալի-օղլիին վէրքեր հասցրին մարմնի մի քանի տեղերից մի սրճարանի մէջ՝ Վօկզալնայա փող.։ Երկուսն էլ ձերբակալված են. վիրաւորվածի դրութիւնը վտանգաւոր չէ։

◆ Սեպտ. 1-ի գիշերը Վելիկօկնեաժեսկայա փող., Տէր-Աստուրեանի աղօրանոցից ոչ հեռու, կանգնեց մի կառք, կառապանը իջնելով վայր դրեց ինչ-որ մարդու և ինքը հեռացաւ։ Այդ նկատեց իր պատուհանից հիւանդ Սիմէօն Լոմիձէն, որ դուրս գալով կանչեց դռնապան Կումալիանին և երկուսով երբ մօտեցան նրան, տեսան, որ նա սպանված մարդու դիակ է։ Սրա կրծքից հոսում էր արիւն։ Նրանք իսկոյն իմաց տուին 9-րդ ոստիկանատուն, որտեղից եկաւ քննիչը և սպանվածի գրպանում գտաւ հետևեալ գրութիւնը. «Ով կը կամենայ հանգստօրէն իմ մահը տեսնել, թող գայ Միքայէլեան հիւանդանոցը։ Վանիա։ 1913 թ. 1/IX»։ Ծրարի վրա գրված էր հասցէն՝ «Վելիկօկնեաժեսկայա, № 115, Բաղալեանին»։ «Քննութիւնը պարզեց, որ ինքնասպանութիւն գործած անձը՝ Թիֆլիսի առևտրական դպրոցի 8-րդ դասատան աշակերտ Յովհաննէս Ալլահվերդեան Բաղալեանցն է, 20 տարեկան։ Դուրս գալով տնից, ծնողների ասելով, նա դուրս եկաւ տնից ամբողջ օրը մռայլ տրամադրութիւնից յետոյ, յայտնելով թէ գնում է պրօժեկտոր։ Բայց նա կառքի մէջ կրակել է իր վրա ատրճանակից։ Դիակն ուղարկված է Միքայէլեան հիւանդանոց։

ԳԻՏՈՒԹ., ԳՐԱԿԱՆ., ԳԵՂ. ԱՐ.

ԹԱՏՐՕՆ ԵՒ ԵՐԱԺՇՏՈՒԹԻՒՆ

—

Ժողովրդական Տան թատրօնում

Զուբալօվի անուան Ժողովրդական Տան դռները, ամարային դադարից յետոյ, կիրակի, սեպտեմբերի 1-ին, լայն բացվեցին հայկական ժողովրդական ներկայացումների համար։

Այդ օրը՝ սէզօնի բացման առիթով՝ սեկցիան դրել էր Վ. Փափազեանի «Ժայռ» 4 գործ. դրաման, որպիսի ընտրութիւնը մենք գտնում ենք աջող, ի նկատի ունենալով որ յիշեալ պիէսը՝ Ժողովրդական Տունը յաճախող հայ թատրօնասէր մասսային համապատասխան է միանգամայն։

Հին սիրողներից մասնակցում էին Մուրադեան, Սարեան, Գալստեան, Ղուչչեան և այլն։ Դերասաններից՝ տ.տ. Զարէլ, Յասմիկ և Սեւումեան։ Առանձնապէս ներկայացմանը փայլ տուեց վետէրան-սիրող Տէր-Գրիգորեանի հանդէս գալը։ Մենք առանձին հաճոյքով հետևում էինք նոր սիրողուհի Լիւսի-Սեւումեանի խաղին, որ անպայման կարող է ոյժ հանդիսանալ հայ թատերասէրների դերդաստանում։

Սիրող Մուրադեան հմուտ բեմխաղերի ձեռքի տակ կը դառնայ ապագայում շնորհալի դերակատար, որի համար նա ունի տուեալներ։

«Ժայռի» խաղի նկատմամբ մանրանշելով ընդհանուր առմամբ բաւարար լինելը, մենք չենք կարող մեր գոհունակութիւնը չը յայտնել այն առիթով, որ Ժողովրդական Տան հայ թատրօնասէրների բեմխաղերի պաշտօնում ընտրված է Սեւումեանի նման ձեռնհաս անձն, որպիսի հանգամանքը ինքնին գրաւական պէտք է ներկայանայ գործի աջողութեան։

Սեւումեանի երևալը ընդունվեց ծափահարութեամբ թատրօնը ծայրէ ի ծայր լցրած հասարակութեան կողմից։

Լիակատար աջողութիւն ենք ցանկանում հայկական սեկցիային, թատերասէրների խմբին և բեմխաղերին՝ պատուով տանելու ժողովրդական թատրօնի վսեմ գործը, որ այնքան մօտ է մեր սրտին։ Ես

ՕՐՎԱՅ ՆՈՐՈՒԹԻՒՆՆԵՐ

—

◆ Ներկայումս ներքին գործերի մինիստրութիւնը լուրջ ուշադրութիւն է դարձնում Ռուսաստանի զանազան մասերում խօլերայի տարածման վրա, որ Ռուսաստան է մտել Բալկանեան թերակղզուց։ Ի թիւս այլ տեղերի խօլերան բուն է գտել նաև Քութայիսի նահանգում և Սուխումի շրջանում:

◆ Մայրաքաղաքի լրագիրների ասելով, Նոր-Տարվայ մօտերը Կոկօվցեվին կը շնորհվի կոմսի կոչում, որից յետոյ նա կը թողնէ մինիստրների խորհրդի նախագահի պաշտօնը և կը ստանձնէ դեսպանի պաշտօն Պարիզում կամ Բերլինում, ըստ որում կը գրաւէ բացառիկ դրութիւն յատուկ լիազօրութիւններով: Պրեմիերի թեկնածուներ համարվում են Կրիվօշէյինը և Գօրէմիկինը:

◆ Ներքին գործերի մինիստր Մակլակօվի դրութիւնը շատ կայուն է այժմ: Բարձր շրջաններում նա վայելում է համակրանք իր քաղաքականութեան շնորհիւ:

◆ Պետերբուրգից հեռագրում են, որ վճռված է բացառիկ դրութիւնները պահել միմիայն մայրաքաղաքներում և ծայրերկիրներում:

◆ Կովկասի փոխարքայի ամենահպատակ զեկուցագրի մէջ աղանդաւորների մասին լաւ է խօսված հակառակ Վրաստանի էկզարխի ներկայացրած դրութեան: Այդ տարաձայնութիւնը կը քննվի էկզարխի առողջանալուց յետոյ միայն:

◆ Պետերբուրգում տարածված լուրերի համաձայն, մինիստրների խորհրդում Կովկասի փոխարքան ուժեղ օպպօզիցիայի է հանդիպելու կովկասեան համալսարանի հարցում: Աջակողմեանները նախագծել են հարցաքննում ներկայացնել Պետ. Դումայում այն մասին, թէ անթոյլատրելի է ունենալ ծայրերկրում այնպիսի փոխարքայ, որ իր զեկուցագրի մէջ ներհակում է կենտրոնական քաղաքականութեան:

◆ Սեպտ. 5-ին լրանում է ֆինլանդական սէյմի գոյութեան կէս դարը:

◆ Խարկովում յայտնի պրոֆեսոր Բախմէտիեվը թունաւորվեց ձկան թոյնով:

◆ Շուտով Թէօդոսիայում կը սկսվեն աշխարհահռչակ Այվազովսկիի մահարձանի կառուցման աշխատանքները ժողովրդական նուիրաբերութիւններով, որոնց գումարը պատկառելի թիւ է կազմում:

◆ Առևտրի ու արդիւնաբերութեան մինիստր Տիմաշեվը այս օրերս մեկնում է արտասահման երկարատև արձակուրդով:

◆ Պետական Դումայի աշխատաւոր խմբակի նախաձեռնութեամբ Պետերբուրգում կայացաւ յայտնի հասարակական գործիչների խորհրդակցութիւն, ուր որոշվեց քարոզել, թէ անհրաժեշտ է գումարել Ռուսաստանի տարբեր ազգութիւնների ազգային-քաղաքական շրջանների ներկայացուցիչների համագումար:

◆ Ռուսական դիւանագիտական շրջաններում տեղեկութիւններ են ստացված, որ երիտասարդ-թիւրքերը ընդհարում են ունեցել «Մ. և Ա.» կոմիտէի հակառակորդների հետ: Էնվէր-բէյը վիրաւորված է:

◆ Լրագիրների ասելով՝ Պարիզը անթել հեռագրով կապվելու է գերմանական սահմանագլխում գտնվող ռուսական բերդի հետ:

◆ Մօտիկ ապագայում Պետերբուրգում սպասվում է բուլգարական թագաւոր Ֆէրդինանդը:

◆ Ռուսաց ներքին գործերի մինիստրութիւնը հարց է յարուցել գրական պայմանագրեր կապելու Անգլիայի, Դանիայի, Բէլգիայի և Իտալիայի հետ:

◆ Մամուլի օրինագիծը մինիստրների խորհրդի մէջ ենթարկվեց մի քանի փոփոխութիւնների: Օրինագիծը շուտով կը ներկայացվի Պետ. Դումային:

◆ Բեսսարաբիա է մեկնել ժող. լուս. մինիստր Կասսօն:

◆ Ֆրանսիական «Matin»-ի ասելով, գեներալ Ժօֆֆրի Ռուսաստանում գտնված միջոցին որոշակի ու ճշգրիտ մշակվել են ֆրանս-ռուսական զինուորական դաշնագրի շատ կէտերը:

◆ Օդեսայի պատուաւոր դատաւորների ցուցակից հանվեց յայտնի պրոֆեսոր Մէչնիկովը, որովհետև չունի այն ցէնզը, որպիսին պահանջվում է տեղական դատարանի նոր օրէնքով:

◆ Լուրերի համաձայն, իտալական թագաւորը ներումն է շնորհել Տարնովսկայային:

◆ Հաագայում բացված խաղաղութեան պալատում հաստատվում են ոսկէ ցուցանակներ, որոնց վրա յաւերժանալու են խաղաղութեան պահպանմանը նպաստող անձանց անունները: Ոսկէ տառերով մակագրվելու են ի միջի այլոց ռուսաց արտաքին գործերի մինիստր հոֆմէյստէր Սազօնովի, անգլիական մինիստր սըր Էդուարդ Գրէյի, ռումինական մինիստր նախագահ Մայօրէսկուի և աւստրիական մինիստր կոմս Բէրխտօլդի անունները:

◆ Ծովային մինիստր Գրիգօրօվիչը մինիստրների խորհրդին ներկայացրեց մեծ նաւակառուցման վերամշակված ծրագիրը:

◆ Պարսկաստանի պետական խնամակալ Նասր-ուլ-Միւլքը հասել է Թէհրան:

◆ Սալար-ուդ-Դօվլէն մեկնում է Շվէյցարիա: Նրան տրվում է կենսաթօշակ 14,000 թուման և ճանապարհածախք 5250 թուման:

◆ Վանից Ջաբիր-փաշան, կենտրոնական կառավարութեան կարգադրութեամբ, եկել է պարսից սահմանը՝ ներողութիւն խնդրելու ռուսաց զօրամասի հրամանատարից՝ վերջերս ռուս և թիւրք պահակախմբերի միջև տեղի ունեցած զինված ընդհարման առիթով:

ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

(ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ՀԵՌ. ԳՈՐԾ.)

31 օգոստոսի

ՌԻԳԱ: Արէնսբուրգից տեղեկացնում են, որ ծովի վրա նաւակով զբօսանք կատարելիս խեղդվեցին էստօնական «Խաէլ» թերթի խմբագիր-հրատարակիչը և երկու աշխատակից:

ՏՈՒԽԱՊՍԷ: Ուժեղ հեղեղից Տուապսինև Պսուկ գետերը վարարվեցին: Քաղաքում և շրջակայքում վնասվել են երկաթուղային շէնքերը: Կան մարդկային զոհեր: Շատ անասուն ընկաւ:

ՆՕՎՕՐՕՍԻՅՍԿ: Հեղեղն ու գետերի վարարումը նահանգում չափազանց վնասեցին այգիներին ու դաշտերին: Ընկաւ շատ խոշոր ու մանր անասուն: Կան մարդկային զոհեր:

1 սեպտեմբերի

ՄԱՐԻՆՍԿ: Լոյս շաբաթ օրվայ գիշերը բանտում խեղդամահ արին 3 հսկիչների, և մարդասպանները—թւով քրէական 4 յանցաւորներ—փախան:

ՍՕՉԻ: Երկու շաբաթ տեղացող անձրևի հետևանքը եղաւ սաստիկ հեղեղը: Խոշոր կարկուտը անհաշիւ վնաս տուեց բուսականութեան, մրգատու ծառերին, եգիպտացորենին և ծխախոտի դաշտերին:

ԿՐԱԿՕՎ: Լրագիրները Գալիցիայի վնասը հեղեղից գնահատում են 266 միլիոն կռօն:

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ: Հանդէսով սկսվեց զինուորական աէրօպլանների միջազգային մրցութիւնը:

Թագուհի Կայսրուհի Ալէքսանդրա Ֆէօդօրօվնայի անուան 10,000 ր. մրցանակը շահեցին Մանթաշեանի երկու նժոյգները: Բօրօդինի 15,000 ր. մրցանակը շահեցին Լազարեանների և Մանթաշեանի նժոյգները:

ԿԻԵՎ: Բացվեց մեղուաբոյծների համառուսական համագումարը:

ԲՈՒԽԱՐԵՍՏ: Ընկաւ և մահացաւ օդաչու Վլէյցը:

Խմբագիր-հրատարակիչ՝
ԱԼԷՔՍԱՆԴՐ ՔԱԼԱՆԹԱՐ
Հրատարակիչ՝ Հ. ԱՌԱՔԵԼԵԱՆ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ОДОЛЬ
Безспорно лучшее полосканіе

(М. 179586/179604)

Ժամանակակից գիտութեան հայեցակէտից՝ հաստատված է, որ Օդոլը ամենալաւ դեղն է ատամների և բերանի համար:

ԻՆՏԵԼԻԳԷՆՏ ընտանիքում ընդունում են գիշերօթիկ աշակերտ և աշակերտուհիներ մինչև 15—16 տարեկան:
Այնտեղ և պատրաստվում են բոլոր միջնակարգ դպրոցների համար:
Հասցէն. Тифлисъ, Николаевсккая ул. домъ 21, кв. 5.
(ե) 717. 2—2

ԻՄ ԿԱԶՄԱԾ
ԿՐՕՆԻ ԴԱՍԱԳՐՔԵՐ
Ստանալ ցանկացողները կարող են դիմել՝
1. Ինձ՝ Бебутовская 20.
2. «ԳԻՐ» գրավաճառանոց և
3. Միւս հայ գրավաճառներին:
Զեղչ 25°/₀.
Սահակ ա.-ք. Սահակեան
(ե. հ. շ.) 694. 8—3

„Մշակի“ խմբագրատանը
վաճառվում են
հետևեալ վիպական երկերը.
1) ՋՀՈՒԴ ՔՈՒՇԱՆ՝ վէպ Պարսկաստանի կեանքից, Շահրիարի . 1 ր. —
2) ԻՆՆՍՈՒՆ ԵՐԵՔԸ, մեծ վէպ Վ. Հիւգօյի, թարգմ. Ա. Սաֆարեանի . . . . 1 ր. 50 կ.
3) ՈՒՐԱՆԻԱ, աստղագիտ. վէպ. Կ. Ֆլամարիօնի, թարգմ. Հ. Առաքելեանի . . . . 1 ր. 50 կ.
4) ՀԱՅՐԵՆԻ ՀՈՂԸ, վէպ Հանրի Բօրդօյի, թարգ. Հ. Առաքելեանի — 60 կ.
5) ՏԱՍՆ ԵՒ ԵՐԿՈՒ ՊԱՏՄՈՒԱԾՔ, Շահրիարի . . . . — 50 կ.
6) ՀԱՅՐԵՆԱԶՈՒՐԿ, Ե. Սպիրիի, թարգ. Իս. Ցարուքթիւնեանի . — 50 կ.
7) ՔՍԱՆ ՎԷՊԻԿՆԵՐ, Գի դը Մօպասանի, թարգ. Հ. Առաքելեանի 1 ր. —
8) ՍԱՒԱՌՆՈՂ ՈԳԻՆ, վէպ. Յ. Սօլօվեանի . . . . —40 կ.
Նրանք, որոնք յիշեալ գրքերից մի-մի օրինակ կը պահանջեն մեզանից փողը կանխիկ ուղարկելով, կը ստանան 30°/₀ զեղչ և ճանապարհածախսը մեզ վրա: Վերադիր վճարով պահանջողներին զեղչ կը լինի 25°/₀:
(5) 10—8

Լոյս տեսաւ
Յ. ԴԱՂԲԱՇԵԱՆԻ
РУССКІЙ ЯЗЫКЪ
въ армянскихъ школахъ.
Азбука и первая книга для чтенія.
ЦѢНА 20 КОП.
Խիստ շքեղ, պատկերազարդ դասագիրք, բազմաթիւ պրօպիսներով, հայոց ծխական ուսումնարանների համար, յարմարեցված նրանց կեանքին և ծրագրին:
Նոյն հեղինակը ծախում է նաև իր Ռուս-Հայ և Հայ-Ռուս լիակատար բառարաններն (երկուսը միասին 12 ր.) և ռուսերէնի ինքնուսոյցները:
Դիմել՝ А. Дагбашяну. Тифлисъ. Кадетская ул., № 6. 726. 1—1

Լոյս տեսաւ և վաճառվում է Թիֆլիսի բոլոր գրախանութներում և հեղինակի մօտ
ՓԻԼ. ԴՐ. Մ. ԽՈՍՏԻԿԵԱՆԻ
Իսրայէլի սրբազան պատմութիւն
(Կրօնի դասագիրք ըստ նորագոյն ազբիւր.)
Վաճառվում են նաև «Կրօնապատմական փիլիսոփայական գրադարանի» հետևեալ գրքերը.
1) Ի՞նչ է կրօնը և ինչ է բարոյականութիւնը.
2) Ի՞նչ է Աստուածաշունչը.
3) Բնագիտական և կրօնական աշխարհահայեացք:
(ե.հ.կ.) 700. 5—4

ՎԱՃԱՌՎՈՒՄ ԵՆ
Նիկ. Աբրահամեանի
հետևեալ հրատարակութիւնները.
I
ՁԵՌՆԱՐԿ ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ՀԱՇՒԱՊԱՀՈՒԹԵԱՆ
երկաթ., կօլօնիալ, բակալ. և բամբակէ ապրանքների (առաջին անգամն է, որ լոյս է տեսնում հայերէն լեզուով), գինն է 2 ռուբ.:
II
Руководство торг. бухгалтеріи
въ связи съ керосинозав. производствомъ (2 допол. и исправл. изд.) Ц. 2 р. 50 к.
III
Таблица вычисл. процентовъ
отъ 1 до 360 дн. отъ ¼ до 12°/₀ и на всѣ капиталы отъ 1 до 10,000 р. (2 изд.) Ц. 85 к.
IV
Журнальныя статьи
для опредѣл. дебета и кредита. Ц. 75 к.
V
Общедоступная справочн. книжка
для слушателей и слушательницъ бухгалтерск. курсовъ и занимающихся конторскими дѣлами. Ц. 30 к.
Հեղինակի մօտ՝ Бухг. курсы Н. В. Абраамяна, Николаевская, 22 և գրավաճառանոցներում:
(ե.հ.կ.) 680. 20—6

ԱՇԱԿԵՐՏՆԵՐ
ՈՒՍՈՒՑԻՉ-ԽՄԲԱՊԵՏ
ԵՒ
ԳԻՄՆԱԶԻԱԿԱՆ ՈՒՍՈՒՑՉՈՒՀԻ
Որոնում են պաշտօն հայկական դպրոցներում:
Հասցէն «Մշակի» գրասենեակ:
(շ. օ.) 716. 3—3

ՀԱՇՈՒԱՊԱՀԱԿԱՆ ԴԱՍԸՆԹԱՑՔՆԵՐ
Գ. եւ Մ. ՏԷՐ-ԴԱՒԹԵԱՆՆԵՐԻ
Նիկոլայեվսկայա, 36, Վօրոնցովի արձանի մօտ: Ընդունելութիւն երեկոյեան ժամը 4—7-ը:
613. 50—18

Ներսիսեան Հայոց Հոգևոր Դպրոցի Հոգաբարձութիւնը սրանով յայտարարում է՝ որ դպրոցում աշակերտների ընդունելութիւնը շարունակվում է: Ազատ տեղեր կան I, II և V դասարաններում: Դպրոցում ընդունվել ցանկացողները պէտք է ներկայացնեն պ. վերատեսչին [illegible] խնդիր հետ միասին իրանց ծննդեան, ծաղկի և ուսման վկայականները մինչև սեպտեմբերի 7-ը.
(հ.ու.) 728. 3—1

ՅՈՎՀԱՆՆԷՍ ՄԱԼԽԱՍԵԱՆ և ՆԱՐ-ԴՈՍ
ԳԻՐ եւ ԿԵԱՆՔ
Դասագիրք հայոց լեզուի, միջնակարգ դպրոցների ստորին դասարանների, ծխական դպրոցների բարձր դասարանների և պետական դպրոցների համար:
Գինն է 1 ր. 25 կոպ..
Դիմել Թիֆլիսի գրավաճառներին:
(հ.) 729. 2—1

ԱՌԵՒՏՐԻ ԵՒ ԱՐԴԻՒՆԱԲ. ՄԻՆԻՍՏՐ. ԻՐԱՒԱՍՈՒԹԵԱՆ ՆԵՐՔՈՅ ԳՏՆՎՈՂ
Ա Ռ Ա Ջ Ի Ն
ՀԱՇՒԱՊԱՀԱԿԱՆ ԴԱՍԸՆԹԱՑՔՆԵՐ
Ն. Ռ. ԱԲՐԱՀԱՄԵԱՆԻ
(Գոյութիւն ունի 1895 թ.)
Հեղինակ առևտրական հաշւապահութեան ձեռնարկի հայոց եւ ռուսաց լեզւով և այլն. հարուստ հրատար.:
Տալիս է երկու սեռի անձանց մասնագիտական առևտրական գիտութիւն 4-ամեայ դասընթացքում, ամենօրեայ պարապմունքներով:
Դասընթացքներում անցնում են.—Առևտրական և արդիւնաբերութեան գանազան ճիւղերի հաշւապահութիւն, նաւթարդիւնաբերութեան և նաւթագործութեան ճիւղի հետ միասին, գանազան սիստեմներով, կատարեալ իրացումն կրկնակի իտալական սիստեմով և առևտր. թւաբանութիւն, առևտր. աշխարհագրութիւն, մուրհակային և առևտրական իրաւունքներ, քաղաքատնտեսութիւն, [illegible]
Ոչ պարտադիր առարկաներն են՝ 1) Օտար լեզուներ, 2) Ստենօգրաֆիա (սղագրութիւն) և 3) Ռեմինգտօնի վրա գրել:
Ուսուցիչները բարձր կրթութիւն ստացած մասնագէտներ են, որոնք գործնականապէս և տեսականապէս պատրաստված են ամեն մի առարկայի համար առանձին:
Վկայագրերը տրվում են մինիստրութեան թոյլտուութեամբ:
Պարապմունքների սկիզբը սեպտեմբերի 15-ից 1913 թ.: Խնդրագիրներն ընդունւում են ամեն օր, առաւօտեան ժամը 9—11-ը, երեկոյեան 5—7-ը: Ծրագիրը և կանոնները տրվում են [illegible] բար: Դասընթացքներին կից հաստատված են քիչ պատրաստված անձանց համար առանձին պատրաստողական և լրացուցիչ դասարաններ ռուսաց լեզուի և թւաբանութեան համար:
Կուրսերը առաջարկում են ցանկացողներին ունենալ իրանց առևտր. գործերի համար գործնակ. և տեսականապէս պատրաստված հաշւապահներ, օգնակ., կօնտր. և այլ առևտր. [illegible] սերի հիմնադրին:
Կուրսերի ընթացաւարտների թիւը անցնում է 2000 հոգուց:
Անձամբ և նամակներով դիմել՝ Тифлисъ, Учредит. Бухг. Курсовъ Н. В. Абраамяну, Николаевская, 22, Телефонъ 7—44.
(կ. հ. ե) 576. 0—18

Լոյս են տեսել և վաճառվում են
ՆԻԿ. ՍԱՐԳՍԵԱՆԻ
ԲՆԱԿԱՆ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ԴԱՍԳՐՔԵՐԸ
1) **Դասագիրք բնական պատմութեան,** կենդանի եւ անկենդան աշխարհներ
Երեք կամ չորս տարվայ դասընթաց ունեցող միդասեան դպրոցների համար կազմված համաձայն եկեղեցական-ծխական դպրոցների ծրագրի, գինը. 50 կ.
ԵՐԿԴԱՍԵԱՆ և ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑՆԵՐԻ ՀԱՄԱՐ.
2) **Դասագիրք բնական պատմութեան,** մասն I, Մարդ եւ կենդանի, գինը. 60 կ.
3) » » » մասն II, Բոյս » 60 կ.
Բոլոր դասագրքերում էլ օրգանական աշխարհը կազմված է կենսաբանական [illegible]
ՄԱՆՈՒԿՆԵՐԻ ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ.
1) Կենդանիների գոյները՝ 15 կ., 2) Թէ ինչու համար է ծաղիկը՝ 15 կ., 3) Թէ ինչպէս են տարածվում սերմերը՝ 15 կ.:
ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ.
Մարդու ծագումը, Վիլհէլմ Բօլշէի, թարգմ. գերմ. գինը. 40 կ.
(օ.մ.) 699. 10—4

Առևտրի եւ Արդիւնաբերութեան Մինիստր. տնօրէնութեան ներքոյ գտնվող
Տ. Մ. ՓԻԼՕՅԵԱՆԻ
ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ԳԻՏՈՒԹԻՒՆՆԵՐԻ ԿՈՒՐՍԵՐՈՒՄ
Թիֆլիս, Միխայէլեան պր. 24/4. Տէլէֆօն № 976.
Տալիս են երկսեռ անձերին մասնագիտական առևտրական կրթութիւն:
Դասընթացքն աւարտողներին տրվում են ատտեստատներ:
Գործնական պարապմունքները կատարվում են կուրսերում՝ Լօնդօնի Pitman և Փարիզի Pigier դպրոցների ձևով կազմակերպված Muster-Comptoir-ում: Նիւթերն անցվում են ըստ կարգի. Ծրագիրներն են. ա) պարտադիր. 1) Հաշւապահութիւն (պարզ, իտալ., գերմ., ֆրանս., ամերիկ., [illegible] գործարանական), 2) Առևտրական թւաբանութիւն. 3) Քաղաքատնտեսութիւն. 4) Օրէնսգիտութիւն (առևտրական իրաւունք, մուրհակի կանօնադրութիւն). 5) Առևտրական թղթակցութիւն. 6) [illegible] համրիչի վրա. 7) Վայելչագրութիւն, արագագրութիւն (ամենավաստ ձեռքի ուղղութեամբ). բ) ոչ-պարտադիր. 1) Օտար լեզուներ. 2) Սղագրութիւն. 3) Դակտիլօգրաֆիա (ռեմինգտօն) [illegible] թղթակցութիւն օտար լեզուներով: Պարապմունքները կատարվում են և ցերեկը [illegible] շատութեան պատճառով բացվում է երկրորդ զուգընթաց բաժանմունք, որը մասնաւորապէս [illegible] քաղաքացիների համար: Ունկնդիրների թիւը սահմանափակված է: Պարապմունքների սկիզբը սեպտեմբերի 15-ին: Խնդիրների ընդունելութիւնը առ. ժամը 10—12-ը և երեկ. 4—7-ը: Ծրագիրը և կանոնները ուղարկվում և տրվում են ձրիաբար կուրսերի շէնքում: Կուրսերը ֆիրմաներին [illegible] հաշւապահներ, օգնակ. հնար և առևտր. այլ ծառայողներ՝ կուրսերի ընթացաւարտներից [illegible] նակութեամբ աչքի ընկնողներից: (Ընթացիկ տարում կուրսերն ունեցել են 284 ունկնդիր, որոնցից 53 հոգի իգական սեռից):
Կուրսերի հիմնադիր՝ Տ. ՓԻԼՕՅԵԱՆ
(ե. հ. կ.) 556. 0—23

Լ Ո Յ Ս Տ Ե Ս Ա Ւ
ԱՐՇ. ՉԻԼԻՆԿԱՐԵԱՆԻ, ՏԻԳ. ՌԱՇՄԱՃԵԱՆԻ և ԱԻ. ԽՍԱՀԿԵԱՆԻ կազմած
ԴԱՍԸՆԿԵՐ
1) Առաջին տարի, գունաւոր պատկերներով, 5-րդ տիպ բարեփոխված . . 40 կ.
2) Երկրորդ տարի, 4-րդ տիպ բարեփոխված . . . . . . 50 կ.
3) Երրորդ տարի 3-րդ տիպ բարեփոխված . . . . . . 60 կ.
4) Չորրորդ տարի . . . . 70 կ.
ԴԱՍԸՆԿԵՐՆԵՐԸ թոյլատրված են Օդեսայի ուսումնարանական շրջանի հոգաբարձական խորհրդի կողմից որպէս դասագիրք:
Ա. տարվայ Այբբենարան տպվում է ամբողջովին ձեռագրով—բացի դրանից նոր մտցված են դասերի հետ կապ ունեցող նկարչական պարզ գծերով զարգացած պատկերներ:
Բոլոր տարիներն ունեն արտագրութեան համար բազմաթիւ ձևագրեր յօդուածներ՝ հիմնված ուղղագրական կանոնների վրա:
Երրորդ և չորրորդ տարիների մէջ կան բազմաթիւ ՇԱՐԱԴՐԱԿԱՆ ՁԵՒԱՓՈԽՎՈՂ ՊԱՏԿԵՐՆԵՐ.
Դիմել՝ Թիֆլիս «ԳԻՐ», «ԳՈՒՏՏԵՆԲԵՐԳ», Երևան՝ «ԱՐԱՐԱՏ» և Ցովհաննիսեան գրավաճառներին և կամ կազմողներին՝ Երևանի թեմական դպրոց:
Գումարով գնողներին կը լինի զեղչ:
(շ. ե. հ.) 647. 12—5

Типографія канцеляріи Намѣстника Его Императорскаго Величества на Кавказѣ Лорисъ-Меликовская улица, домъ казенный